

ՄԵԽՈՎԸ ԳԱԿԹԵԸՆ ԹԵՂԻԵԳԵԱՅՑ

ԵՂԵՐԵՐԴՈՒԹԻՒՆ

Յ Օ Բ Հ Ա Ս

# ԹԱՆԿԱՅ ԹԱՐԻԱԴԵԱՅՑ

Ա Ր Ա Ր

Հեղինակ Քնարին Միրամարի

— 1837 —

Հրատարակեալ ծանօթիք.

Պարոն Յովհաննու Շահնազար Մարգսեանի

Նոր Ֆուղայեցւոյ

Բարեացապարտ Աշակերտի Քերթողին.

Թ Ի Գ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձե, Նիկ. գ. առ. 21

Տիպոգրիա M. Շարաձե, Նիկոլ. 21

1893

891.99  
թ-18

891.99

P-18

Y

ԱԵՐՈՒ  
891.99  
1983

ՄԵՍՐՈՎՅԻ ԳԱՅՐԵՆԻ ԹԱԳԻՄԴԵԱՆՑ  
ԱՐ

19 NOV 2011

ԵՂԵՐԵՐ ԳՈՒԹԻՒԽԻՆ

Յ Օ Բ Հ Ա Ս

## ԹԱԿԱՅ ԹԱՐԻԱԴԵԱՆՑ

ԱՐԱՐ

Հեղինակ Քնարիմ Միքահարի

-1837-

6  
240



Հրասարակեալ ծակելուր

Պարոն Յովհաննու Շահնազար Սարգսեանի

Նոր Զուղայեցւոյ

Յարեացապարտ Աշակերտի Քերթողին.



Թ Ի Գ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարադզ. Կիկ Գ. առ. 21

Տիպոգրաֆія М. Шарадзе, Никол. 21  
1893

17.04.2013

Дозволено ценз., Тифлисъ, 19-го декабря 1892 г.



1981-2016  
4145 | 68 1981

Dicere quod puduit  
Scribere jussit amor.

Զոր ինչ ասել ամաչէր  
Հբամայեաց գըել Աէր:

# διαβούθηθην

**Բ**նդ այս գիրքը ի թահիծութեան անդ  
մլրիցն տրտմականաց՝ հապճեալ անցանելով,  
ի վերայ աստուածային խրառուց ընկալայ  
եւ զայլ եւ այլ անձնական վտանգու, մինչեւ  
ի կենաց լինել ապայոյս:

Վասն որոյ մասց Քերդածն կիսակատար,  
եւ տրամադրութիւն գրելեացն անտարբեր:

Եթէ կամք իցեն Երկնից այսօրինակ  
թողուլ զսյն, չներելով ժամանակին սղու-  
թեան, աղաշեմ անքամփր առնել զիմ Ցխուր  
գրիչ:

Ա. Դ. ԹԵՂԻԿԻԵՎԻ

Ե Ղ Ե Բ Ե Բ Գ Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Ի Թ Ա Ն Ի

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Մի՞ կոյս ուխտեալ աճհարսմածու  
Զիմ՝ տաղ բնաւ կարդացէ.  
Զի աճաւշակ մարմույ սիրոյ՝  
Զիմ ցաւ ռադիդ չկըռէ:



Տխուր ներածութիւն: Աստղիկ զթաղիադին ի  
Հեշտութիւն հրաւիրէ: Կա ընդ Պալլասայ ընտրէ գը-  
նալ զառ ի վեր, ընդ որ մախացեալ Աստղկան՝ գնայ  
ի Սանդարամէտս: Գրգուէ ընդգէմ նորա զգեւս Յիմա-  
րութեան, Զրկանայ և Խարեւութեան: Աթենաս զինէ  
զորդի իւր դիմանալ հարուածոցն: Դարանին նորա մին-  
չև ամուսնանայ Թաղիադին ընդ թանկայ, զայն պա-  
տեհ յաջող կարծեն դեք, փոթորկեն զաւուրս հարսա-  
նեաց նոցա, այլ ուր աճի ի հալածանոն: Օրհաս թան-  
կայ, Հրեշտակը պյու ելանեն, և դհոգին հանեն յեր-  
կինս պատուով: Գայ յուզարկէ Թաղիադին զնա ի փա-  
ռը Աստուծոյ:



Ա, ՔԱՆԻ անհաս Մուգայր երկնային  
Ոչ համարէի ինձ երանութիւն.  
Եթէ ի կատարս Պարնասեան լերին  
Տայիր ինձ գոնեայ զժամուն դքուն:

Աւր ԱստուածուՀւզյդ անքաւ զօրութիւն  
 Փոխէ զանասուն քարինս ի մարդիկ,  
 Եւ զապուշ համբակս ի պերճ Ապողու.  
 Քոց սքանչելեաց առնել երգեցիկ:  
 Թէ աղէխորով մրմունջ թախծութեան  
 Եցէ գերազօր Դից հաճոյական,  
 Կամ զուգակորոյս ամուրեաց մրմունջ,  
 Երա՛ զիս իշխան հանձարոյ մարդկան:  
 Ի հեղահնչեւն տիուր Տասնաղիս  
 Ամբառնալ ի վեր զիմ ողբոց լալիս,  
 Զի դէպք օրհասի ԹԱՆԿԱՅ ԹԱՊԱՏԵԱՆՅ.  
 Հանուրց պահանջեն սրտեռանդ կոկիծ:  
 Թո՞ղ տատրակ որ զիւր վարուժան կորոյս  
 Եւ թախծի միայն յորմ աւերածոց  
 Թէ լալ կամիցի զիւր տարարադդ զոյդ  
 Ի տապան Թանկայ Խոռնարհեսցի կոյս \*:  
 Փեսայ նորապսակ, որ հարսին զիկիր  
 Հեւ հիւսեալ ի զալդ կանաչ ու կարմիր  
 Հարկիցի ձախող բերմամբ վիճակին  
 Ի թուիս թախծութեան նորա համակիլ:  
 Այր որ բազմամեան ճգանց ըղկնի  
 Տուն շինեալ և շոյտ տնաքանդ լինի,

\* ) Ուր տեսանէ նա զողոմ տեսարան՝ փեսային.  
 Կարօտ առ հարսին գամբան նստիլ մենաոր, և զհա-  
 մատարած յուղը լուսութեան դիշերոյն ի լաց: Ա. Դ. Թ.

Առ Թաղիադին Խլատեմ գնալ  
 Զիւր կորուստ անգիւտ նորա պէս ողբալ  
 Որ յաշխարհ օտար <sup>1)</sup> զմանկ իւր թողեալ  
 Խըն յօտարագոյն <sup>2)</sup> յերկիր հեռանայլ,  
 Եւ մինչ զաւակի հայրանալ յուսայլ  
 Կորոյս կարօտով զջաւակ և Սայր:  
 Այլ ասա ինձ, Ա'ւշ, որ զանցից համայն  
 Գանձես յիշատակ ի քո թանգարան,  
 Թէ ո՞րպէս թուեան վաղանցիկ աւուրբ  
 Եւ զերանութիւնս ընդ հնքեանց տարան:  
 Կամ ո՞ր դիք ցաւեան, ո՞ր բաղդք բոնացան  
 Պատանին պանդուխտ տրորել այսրան:  
 Զի քոյ է հանել մտաց թախծելոց  
 Զանցեալ դիպուածոց վճիտ տեսարան:  
 Թէ ի հովասուն լերանց Արայեան  
 Ո՞րպէս վարեցաւ հողմովք բոնութեան  
 Պանդիստիլ անտէր ի Հինդ հրայրեաց  
 Փորձ ամենակերպ ւանըմեր վշտաց:  
 Զորոյ որպէս թէ կիրք օտարութեան  
 Եւ բուռըն պարսաւ հայր Աղքատութեան  
 Բաւ չեղեալ մաշել զծաղիկ հասակ,  
 Յաւելան յետոյ ւաղէտք Աստղիան:

<sup>1)</sup> <sup>2)</sup>) յաշխարհ օտար նշանակէ զֆալքէժ, իսկ  
 Օտարագոյն երկիր՝ թուի նշանակել զքաղաքն Ծե-  
 շաւան, ուր կատարէր յայնժամ պաշտօն ուսուցչու-  
 թեան Մելիք Միրզա Ղասիմ Արքայորդւոյն Պարսից.  
 Յ. Ք. Մ.

Զի գեղեցկութիւն և սէր զաշացու  
 Երբ արծարծեցին բոց ըզդարշ հրոյ,  
 Զ՞վ ոչ գերեցին ի պաշտօն իւրեանց,  
 Զ՞վ ոչ հալեցին ի բուրայս մեղաց:  
 Մանկութիւն հազիւ մերկանայր ի բաց  
 Զիւր տղայական ցնորից երազ,  
 Երբ վառէր զհոգին ջերմեռանդ կրօն  
 Գնալ ուխտաւոր ի տաճար փառաց:  
 Յետ ազգի ազգի ճգնութեանց դառինց  
 Ըսդ ծով ընդ ցամաք բռնի աղիտից,  
 Յաղիւր փորձութեան այն ինչ հասանէր,  
 Յերկուս բաժանեալ զուղին տեսանէր:  
 Մին ընդ անմատոյց քարուտ զառիվեր  
 Ըսդ բիւրս ի բիւրուց չարիս անկանէր,  
 Այլ ի վախճանի ի տաճար փառաց  
 Քաջս յուխտաւորաց խոստանայր հանել  
 Իսկ մին զառիվայր հարթ և հաւասար  
 Ի վիչ կորստեան ձգիւր ճանապարհ  
 Որ ժամէկան պատիր հեշտութեամբ  
 Զիւրսն յանպատիր ի կորուստ որսոյր:  
 Յուղեգլիի աստ, որ նստէր վարար,  
 Պագչոստ ցանկութեանց՝ հեշտին Սիրամայր,  
 Յիւր չարավախճան յուղի ընդարձակ  
 Համողէր զնա գնալ կամակար:  
 Ուր յարագալար թարմութիւն սիզոյն  
 Քիւրաւոր ծաղկանց բերիլ գոյն ի գոյն,

Կա ականակիտ վտակաց հոսմունք  
 Առնէին զվայրն Սոդոմայ հանգոյն:  
 Արտաքինք նոցա կարի գեղեցիկը  
 Այլ թշուառութեամբ հոծ նորա ներքինք  
 Տան պատրանք չարի բարւոյ կերպարան  
 Ի նիւթ գեհենի որսալ զմարդիկ:  
 «Դ գեղածիծաղ Խոնարհեաց ուղիս»,  
 Ցթաղիսադին կարդայր Դիցուհիս.  
 Որ վայելչութեամբ փափուկ գրկանաց  
 Խոստանայր հեշտել զառօրեայս կենաց:  
 «Ունկնդիթ, մանուկ, որ ի քթիթ ական,  
 «Խնձ հպատակեմ զաշխարհ ամենայն,  
 «Զիս պաշտեն Շնորհը որպէս Սիրամայր  
 «Ճոխութիւնք երկրի յիմ սպասու կան:  
 «Ճինդ զթանգարան անդին գոհարաց  
 «Հորմոս բանայ զեւր բաւիլ մարդարտաց  
 «Ճենաստան ձօնի ինձ մատուցանէ  
 «Զիւր փղոսկրեան ըզձեռակերտուած:  
 «Տիւր<sup>1)</sup> տքնի նիւթել բեհեղ նրբաթել  
 «Զոսկեղէն հանքս իւր բանայ հին Սոփեր.  
 «Իսկ Արաբիա զանուշունս բուրմանց  
 «Զօնէ հեշտախտիս պատարագ ընտիր:  
 «Այլ զինչ պյորիկ, մինչ դից և մարդկան  
 «Ուշ և միտք, հոգի, կեանք համանգամայն

<sup>1)</sup> Տիւրոս.

«Այնքան ստրկին հաճոյից իմոց՝  
 «Մինչ չունել քան զիս գերադոյն վախճան»։  
 Իբրևի մերձ լինէր հաւանիլ մանկան  
 Հրապուրանաց պատիր հեշտութեան  
 Մոյր նորա Պալլաս յամպըս երկեալ  
 Զիւր նրատ նմա այսպէս մերկանայր։  
 «Մինչ քառասնօրեայ ջուրց հեղեղ չեշլեաց  
 «Կիջանել դորա հրդեհ ցանկութեանց  
 «Մինչ հրահոսան տարափք Սոդոմայ  
 «Բաւ չեղեն ծախել հոսիւն գիջութեանց,  
 «Մինչ յաւեժայաղթ քաջութիւնը Ազգաց  
 «Գերեցան ստրուկ պագչոտիս կամաց,  
 «Դոււ մանուկ անզօր ի հաղթից դորա  
 «Կամ թշուառութեանց, փրծանիլ յուսաս։  
 «Կայցէ բու ուրեք սյնքան լուսատեաց  
 «Ոլքան աստ մարդիկ են իմաստնատեաց,  
 «Որք կոյր զկուրայն ի կորուստ փութան  
 «Տանջին չարչար և չ'ըզգուշանան։  
 «Զի պատիշան ընտրութիւն կամաց  
 «Զոր տայ բանեղեաց Բարին աննախանձ,  
 «Անհարկ ի հարկաց կալ աստուածաբար,  
 «Վարեն վատթարեալք ի կորուստ անձանց։  
 «Սրանան ի թես սրարշաւ մտաց  
 «Անդր քան զահեղ Ատեան կարելեաց,  
 «Լծեն զբարձունս ընդ խորս անդնդոց,  
 «Եւ զուրոյն զափ կըռեն յարգանաց։

«Այլ ինքեանք ի չափ անդ անչափանան  
 «Զամենին կրից խզեն զերասան,  
 «Աւստի կատաղի ցանկութիւնք չարեաց  
 «Հոսեն զնոսա յայս գիհ խոհերաց։  
 «Այս ձեր տիտակիր բանի անդրանիկ  
 «Այս կոյր ընտրութեան խառնածին Պարիկ։  
 «Որ մեղաց իւրոց Էառ դատակնիք  
 «Մահու պարաբել զիւր յուշկապարիկ։  
 «Աստուստ ծնանին և ոչ յևստուածուստ  
 «Մեղք մեղկաղիտաց ինքնագիւտ կորուստ,  
 «Այլ քեզ, պատանիգ, թող համարիցի  
 «Անքրագոյն բարի՝ ի չարեդ փախուստ։  
 «Զի թէպէտև զուղիս ժայռոտ մահաբեր  
 «Բիւրաւոր ճգանց մնաս համբերել,  
 «Այլ ի վախճանի պսակ պարծանաց  
 «Կայ քո խնդութեամբ ի գլուխ կապել։  
 «Ընտրեա զոր կամիս» ասաց Աթենաս  
 Եւ եցոյց նմա զՏաճար փառաց  
 Ի մահանուեր ուղւոյն վերջավան  
 Զոր հատանել գործ՝ էր Առաբինեաց։  
 Խրախոյս բարձեալ Աստանդականին  
 Զգժուարութիւնս յանձն առ կամովին,  
 «Մնան բարեաւ» ասէ «գրգանք քո Աստղիկ։  
 «Քո վիշտք աննացք են, զայելք վաղանցիկ։  
 «Ըստ որում բրտունք վասն Հայրենեաց  
 «Են արբունք կենաց Հայրենուսիրաց,

«Ուրեմն բարիք չեշտախտ փափկութեան  
 «Առ նոքօք գրին ինձ արհամարհանս»:  
 Զայս իբրև ասաց, ըզշեղ ի բերան  
 Վեհ Աթենասայ յատկարար նշան  
 Դարձ առնէ անտի ի Հայրենիս իւր  
 Որպէս աղանդին ի նոյեան Տապան:  
 «Հա՛, մանուկ ժողիբ՛, զիմ ծոց մշտերան  
 «Արհամարհե՞ս դու, ընդ Պալլասայ բան.  
 «Այլ այնքան չարիս հանից ես ի քեզ  
 «Մինչ և բուք նորա բուալ<sup>1)</sup> թուլանան»:  
 Յարեաւ իբրև զինծ Խոցոտեալ յոգին  
 Ի սանդարամեսս Խաղաց ստորին,  
 Զդիս դժոխոց ի զէն վրիժուց  
 Գրգուել ընդդէմ Արհամարհողին:  
 Եւ որովհետև յանդնդոյս կեդրոն  
 Զբեկարայ զոտամբ աթոռոյն,  
 Յանհուն խաւարին ի տարածութեան  
 Սնքուն տարրանայր յնոր Մոռացօն,  
 Քացեալ կոկորդ զիւր զանփակ գերեզման  
 Զհանուր կանել նիւթ զարարչութեան  
 Զգեղեցկութիւն լուսոյ Երեսու  
 Եւ զսքանչելի դիրս աստեղատան:  
 Ըզդիւտ քերթողաց, ըզ ճնունդ մտաց,  
 Եւ զդից վերնոց ձանաչօն փառաց

<sup>1)</sup> Բուալ բնէ, բնէ ձայնելն բու թունոց.  
 Յ. Ք. Մ:

Զի անմահ Քաղցուն ձգեալ զիւրն ձանկ  
 Աորզէր զամենայն զսնունդ յաղեաց:  
 «Ոչինչ ուրուական» ցայս ասէ Աստղիկ,  
 «Ա՞յս է իմ պատիւ, այս իմ երախտիք.  
 «Ոյլ համահորդան աւարաւ հոգւոց  
 «Քոյ ամենածախ պարարին աղիք:  
 «Իմ ծաւի աշաց անոյշ հայեցիկ  
 «Քեզ շատ պատրաստէ մարդաղոհ Խորտիկ  
 «Քան զհանուր հնարս Մեղաց և Դիւաց  
 «Ի մի հաւաքեալ եթէ ախորժիք:  
 «Այլ որովհետև թշոււառն աստանդիկ  
 «Զիս յանդգնեցաւ առնել խաղալիկ,  
 «Եթէ կեցցէ նա՝ Ճիւա՛ղ ուրուական,  
 «Ուրեմըն Աստղիկ վաստակեաց հերիք»:  
 Զայս ասաց, ւի ձայն իմստ զարհուրագին  
 Թնդաց Մոռացօն, հրէշ ինքնածին,  
 Դժոխը սարսեցան Մեղը և Մահ պակեան  
 Իշխանիք ստորմոց յապուշ կրթեցան:  
 Յարեաւ Տիտանեան այն ամբարտաւան  
 Խրոխտ արհաւրօք ելից զգեհեան,  
 Եւ ո՞ր ինքնակալ չարար ընդ աշխարհ  
 Ի հաճել զիւր բող քան զայս չարաչար:  
 Անուն էր նորա սատան ձշմարտին  
 Գործք ձեռաց նորա կորուստ անհնարին,  
 Այլ բիւրք ի բիւրուց վերնամարտ ոգւոց  
 Գարշանաց նորուն պաշտօն տանէին:

Որ զիւր ծառայից գործոց արժանին  
 Վարձ հատուցանէր կսկիծ դառնագին,  
 Նոցա ցնորեալ մտաց կուրութեալը  
 Տանջողիս իւրեանց փառք փոխան տային:  
 Յակնարկել նորա յանլոյս յանդնոց  
 Խմբէին առ նա պետութիւնք Այսոց,  
 Ի կորուստ մարդկան անդ կացուցանել  
 Զշարախորհուրդ զիւրեանց Սինհոգոս:  
 Անդ Աքիթոփէլ երատուս չարեաց  
 Յոտն կայր խօսել յատենին դիւաց.  
 Ոյր իբրև բանիւր բերան չարախոս  
 Գաղանիք դժոխոց զեղուին ի դուրս:  
 «Մեծ են ի դժոխս պարծանք բանսարկուին  
 «Որ ի վեգ մտեալ ընդ Շանթառաքին,  
 «Քաջութեամբ յառաջ մղեաց պատերազմ  
 «Եւ յաղարտ եհան զբոնութիւն նորին:  
 «Իսկ արդ հնարք քայ ընդդէմ Ստրկին  
 «Ի գերլու ելցեն, Ոչ ամենեին.  
 «Թող Հեշտ դժոխոց բազմամարդարար 1)  
 «Դարձցի վերստին հրդեհել զաշխսը:  
 «Իսկ Յիմարութիւն և տէր Զրպարտութիւն  
 «Նա Խաբէութիւն սոցին չարագոյն,  
 Թող ընկերեսցին անմահ վրիժուց  
 Զնցել յափտեան զՍտրկիդ զանուն:

1) Այսինքն՝ թող Հեշտառութիւն՝ որ դժոխս  
 բազմամարդ առնել:

Բանսարկուն հաւան լինէր խորհրդոյս  
 Պատրաստէր ճակատ այրընտիր այսոց,  
 Բստ զօրու զօրու և ըստ դրօշու,  
 Զեղալ տարմաբար յանդնոց ի դուրս:  
 Տէր Յիմարութիւն երգուեալ յԱխերսն  
 Գրել անպիտան զպարգևս հոգւոյն  
 Գրաւոր ճգանց զանդին մարդարիտս  
 Յանձնառու լինէր կոխան տալ ոտից:  
 Տէր Զրպարտութիւն՝ ոյր շունչ հրահոս  
 Վիզոյր գիտութեան դալարիս բուսոց  
 Նա ձաղանս, ծաղանս, այսպ և նախալինս,  
 Նզով ընդ դսրով տայր խմբի գիտնոց:  
 Խոկ Խաբէութիւն՝ ոգի չարաղանդ  
 Հին աւուրց օձին ծնունդ հարազատ  
 Խշնան անդնոց, տե՛ս զի՞ յոխորտայր  
 Զշմարտութիւն յաշխարհէ բառնալ:  
 Դեւք այսօրինակ կարգեալ կազմեցան  
 Զիշխեցին յայսնի մղել պատերազմ  
 Քանզի Ամենաս զինեալ էր զնա  
 Զինու Ճշմարիտ Աստուածպաշտութեան:  
 Աւստի համագունդ խոյս ի Պարսկաստան  
 Ի սար Պըմբաւանդ լերին Խմբեցան,  
 Պարապոյ զնա գտեալ հարստել  
 Ի հոգի նորա վրիժուն սուսեր:  
 ԱՅԼ ՎՏԱՐԱՆԴԻՆ այն բազմավարան  
 Անցեալ անվեհեր յարկածից համայն

Այն ինչ ի ԶՈՒՎԱ, անզբաղ մտօք  
Աւրին շնորհաց՝ լինէր երգաբան.  
Ուր երկնապատռմ նորա ստեղեաց  
Զայն ակից եղեալ հաւուց երգեցկաց  
Ա'յնքան երաժիշտ քաղցր եղանակօք  
Կրթէին զհոգիս ի նոր զմայլանա:  
Մինչ ափսոսացին Դիք զնա միայն  
Թողուց ամուրի և անօգնական  
Ուստի ընտրեցին լաւն յօրիորդաց  
Կցորդել նորա անվախճան կենաց:  
Գողտրական շնորհ Տան ԵՊԵԶԱՐԵԱՆ<sup>\*)</sup>  
Թանկագին պարգև թաւնկ ԽԱԹԵԱՆ  
Ոյր գեղ փարատէ ըզ մասյլ մտաց,  
Եւ աջ զկշիռ բուռն աղքատութեան:  
Բարեսուն զաւակ լուսակրօն նախնեաց  
Ծագեալ յարմատոյ կրկին իշխանաց,

<sup>\*)</sup> Գրէ Պարսն Մեռովիք՝ Յակոբ ԱԷթեան՝ եղացրորդի այն թանկայ՝ կնոջ թաղիսագեանի, զհետեւեալ ծանօթութիւնս ի վերայ տոհմի իւրեանց.  
,,Ազագար՝ միակ որդի էր նախահաւուն մերց Աէթայ, աս ծնաւ զերկուս որդիս զՄկրտիչ եւ զԱբդար: Մկրտիչ ծնաւ զՄէթ հաւ մեր, և դասերս չորս:— Սէթ ծնաւ ուստերս երին՝ զՅովհաննէս, զկարագեաւ և զհայրն իմ զՅակով, եւ զդաստերս չորս՝ Աննախաժուն, Ազաթու, եւ Վարդիսաժուն (մայր Պարսն Յարդի անդամնի՝ բարերարին սպաղբութեանս), եւ զսոյն զայս թանգ խաթուն:” Յ. Ք. Մ:

Որ իշխեալ կրից քան հպատակաց, Հայութակաց  
Շահեցան անձանց ճշմարիտ պարծանս:  
Թունիկ ի մօրէ պարոն Յակովբայ<sup>\*</sup>  
Աշխարհաքարոզ իշխանին Ֆուղայ,  
Յզըր լեզուի հանգչէր ճարպիկ Ապողոն  
Մուղայք ամենայն ի գլուխ նորա.

040 1981-20/6

\* Գրէ նայն պարսն Մեռովիք Յ. ԱԷթեան եւ զցեղաբանութիւն սորա այսու օրինակաւ. „Հայր սորա Մելքոնմ անտամք՝ ծնաւ զերիս որդիս զՅովհաննէս, զՅարութիւն եւ զՅակովը զայս: Յովիսաննէս ծնաւ զԳրիգոր՝ մականուամբ Պիծիի Գրիգոր յորթօթեալ եւ աս ծնաւ զՄիրզա Եպուրէ (Յակովը), որ է հայրն Միրզա Մելքոնմ խանի երբեմն դեսպանի Պարսից ի Լոնդրա:

Յարութիւնն՝ փարթամացեալ եւ երեւելի հանդիսացեալ վաճառականութեամբ ի բուշէս, ծնանի երիս որդիս, Մելքոնմ Յովիկի եւ Սիդրաք. Մելքոնմ որդիքը են վար Յարութիւն (Թունիկ) որ հաստատեալ է այժմ ի Շիրազ, եւ թուվմաս՝ որ երբեմն վարեր զպաշտն եկեղեցպանութեան Ա. Եկեղեցյան Կալկաթաւ:— Յովիսափայ որդիք Արշամ և Տիգրան, առաջնակարդ վաճառականնը ի բուշէս:— Սիդրաքը զո՞ն որդիք երեւէ, ունանք ի բուշէս եւ ունանք ի Շիրազ, որոց միոյն անունն է Արամ:—

Իսկ „Պարոն Բակովիքայ Աշխարհաքարոզ իշխանին Զուղայ“ ոչ գոյր արու զմաւկ, այլ երեք գտանելք որք էին Մայիս, Մէր Խաթունն եւ Կանաչուն, զոր ի ինութիւն առեալ է հաւն իմ Սէթ, ի վերագարձին իւրում՝ ի Մազրասայ՝ ուր եղեալ էր ամս 21. եւ ուսեալ էր զեղուացացոց, զբաղեալ զովով շահամառութեամբ: Եւ ի նոր Զուղայ վարեր զպաշտն Ատենադպութեան Ամենափրկչեան վանացն, զուղի նորա հմուտ ի Հայկանին եւսու Յ. Ք. Մ:



Յատեան աշաւոր Արքայից Պարսից  
Բերան բարեխօս համօրէն Ազգիս  
Որ բռանց Խստաց շարժէր գթութիւն  
Այրեց ի մրմունջ և յորբոց լալիս:  
Իսկ զՄԿՐՏՀՏ վեհ Աղաղարեանց  
Թուել կարեմ ես զըարեմասնութեանց  
Զնաշխարհիկ դործ, որով շաշեցաւ  
Հայր արժանապէս կոչել Հայրենեաց:  
Որ ի զեաղմունս զիրաց աշխարհի,  
Յանձին ցուցանէր զՃնաւորի  
Զանհամեմատ վարս Աստուածպաշտութեան,  
Եւ հետեղացն օրինակ բարի:  
Ողորմած իշխան, երբէք չըլսի՝  
Թէ տայր աղքատաց հանդերձ հնոտի.  
Նորովք զնոսա պՃնէր զարդարուն,  
Շատ եղեալ ինքեան զիւր պատառատուն:  
Բայց զի՞նչ այսոքիկ ՀԱՅԻՆԱՍԻՐԻՆ  
Որ գնէր զանձն միշտ վերայ Ազգին  
Ներեա՛ ընթերցող զմին հազարաց  
Բերել զօրինակ սորին ճգնութեանց:  
Այն ինչ բարբարոս բռնաւոր Պարսիկ  
Բեռնէր Զուղայոյ զիւր կապալ սաստիկ,  
Թագոյց Սա զագդ իւր, ւ'ինքն քաջապէս  
Անըմբեր վշտաց եմուտ ի հանդէս:  
Յետ սպառնալեաց բանտից շղթայից  
Դառն հարուածոց դառնագոյն գանից

Երբ զականջանին գամօք երկաթեօք \*)  
Ի սիւն սևեռեալ տոգորէր ցաւօք:  
Աստ սիրելին Ազգ առաքէ լրտես  
Զառաքինիս Հօր լրտեսնել հանդէս,  
Յայնմ վիճակի, ց'եկն պատգամէր՝  
«Գնաա որդեակ իմ, մի աստ երկիր՝  
«Գուցէ տանջանաց հանդիպեալ մասին  
«Զկարողացիս տոկալ աղիտին.

\* Պարսն Մեսրովը Յ. Սէթեան, տայ ծանօթութիւն, թէ ուստիքարոսութիւնս այս ցայսօր ժամանակի ի վար արկանի ի Պարսկաստան, ի պատժել զողով եւ զշարադրծա, եւ համարի առ նոսա պատիժ իմն չընչեն: Ամենայն Երակոյս Զուղայեցոց վկայեն, եւ խորին երախտագիտութեամբ խօսեն ի վերայ Ռասայ Միկրտի եւ ազգասիրական գործ ոյ նորին, որով ազատ պահեաց գծուղա ի Հարկաց ամս բանիս, չառով գորոշեալ Հարկն արքունակին ասելով թէ Աչ ոք գտանի ի Զուղա, ամեներին յերեասց ձերոց հարսանահարութեանց լըին եւ թողին զՀայրենիս իւրեանց, յորոց Հարկա հանից վասն ձեր, եւ այլնու, «Անցաւի Էնցաղոյս հաղուագիւտ Ազգակը Երբունին Ուստայ Մըկտիչ, (յայնմ ժամանակի ամենայն արք փորձառուք եւ ազգաւերը եւ ծերունիք կոչեին ի ժողովրդենէ թհստայ, որ է բառ պարսից եւ նշանակէ հմուտ արհեստաւոր,) ի հասակի 90 ամաց ի թուին 1824: Ի նշան երախտագիտութեան Զուղայեցիք ամիսնիեցին զնա առընթեր զամբանի ԽԽՕԶԱՅ ԱԽԵՏԻՔԻՆ շինողին զեկեղեցի Ա. Աստուածածնիք ի թաղն Մէծ Մէրտանի, ուրազմակաստակաւ ածականս յիշաստակեալ ի սպառնագրին:» Յ. Ք. Մ.

«Յայնժամ՝ փոխանակ բարւոյ՝ չարաչար  
 «Մատնութեան Ազգիս լինիցիս պատճառ»  
 Այսպէս անվեհեր էր նորա հոգին,  
 Այսպէս համբերող լինէր ծերունին,  
 Մինչ զերաւունս իւր ի յաղթութիւն հան,  
 Լուաց զարտասուս վտակաւ արեան:  
 Թէւ անցին սոքա, կաց արդարութիւն  
 Շքեղ զարդարել վմբ թանկաթուն,  
 Կրսեր գստերաց Աշթայ Մկրտչեան  
 Անհայր ի մօրէ սնուցեալ կուսան.  
 Որ յերկրի զեւր մայր համարէր միայն՝  
 Ցերկնի միմթար զանմահ Եհովայն.  
 Այլ անագորջն ձեռըն օրհասին,  
 Եւ զնա բառնայր ի գլխոյ սորին:  
 Որպէս յաղթական անկեալ ապայոյս  
 Ըստ ձեռամբ անգութ թշնամեաց իւրոց,  
 Սդայր նանաջան տիկին հոգեվար  
 Զթանկայ զերես յարտասուս թանայր:  
 «Ինձ ծաղկին դաշտաց, շուշանիս հովտաց  
 «Հաս արդ թառամիլ թօշնիլ վաղահաս..  
 «Ինձ երանարար վայր վայելութեան,  
 «Դառնայ ի խաւար վիշ գերեզմանաց.  
 «Տեսանել ինձ զօր ուրախ հարսանեաց  
 «ԹանկաՅ, ՅԱԿՈՎԵԱՅ իմոց զաւակաց.  
 «Զի ինձ յաշխարհի այլ չունիմ փափագ՝  
 «Քան դնել սոցա զարժանին պսակ:

«Բայց արդ թող նորա զիմ օր գագաղաց  
 «Եւ հանդէս թաղման տեսցեն ակնբաց.  
 «Նա՛ որպէս գառինք ի մարց որբացեալ  
 «Մայեսցեն զհետ ստեանց օտարաց:  
 «ԱՅԼ Դու, Գերագոյն կառավար կարգաց,  
 «Կամք էին քո այս ինձ մահ, նոցա լաց.  
 «Պաշտեսցին յինէն երկիւղիւ սրբով,  
 «Եւ պաշտեսցին միշտ, Աստուած իմ Աստուած:  
 Ապերջանիկ Կոյս, որ սևասքօղեալ  
 Յանակնունելիս ընդ այս պատահար,  
 Տիսուր բայց և լուրջ նայէր անձկալին  
 Գալ սգաւորացն ակմբիլ ի պար:  
 Գլուխ խոնարհեալ գէմք ամօթահար  
 Աչք նորա ծաւիք արեամք ծովացեալ  
 Ոյր պարկեշտութիւն զսպէր զտրտութիւն՝  
 Այսօրինակ լալ, զեւր կաթոգին մայր:  
 «Օրի՞րդք երկրիս հանուր  
 Ինձ լալակից եղեալ այսօր,  
 Չեր տիսուր առեք քնար՝  
 Ողբալ ընդ իս զիմ Տիկին Մայր:  
 Բազմաշխատ գուք ծնողիս  
 Զիս այսբան ամ պահպանողիս,  
 Չեր աչաց ջինջ արտասուս  
 Մարգարտաշար յեռեալ ի հիւ:  
 Թող մանկունք անմայրացեալ  
 Հանցեն ընդ իս զեւրեանց նոր ջայլ.

Թող թշուառք ի տասնաղիս  
Քարձրացուացեն զիւրեանց լալիս:  
Զի անց Մայր իմ գովական  
Ի մշտերան հոգւոց կայան.  
Ողբ ի նա չունի տեղի  
Զիս լացէք դուք կողկողալի:  
Լուսցին երգ քնարաց  
Եւ տօնք ուրախ տարեկանաց,  
Գայլայլիկը հաւուց երգոց  
Թող վերասցին յունկանց իմոց:  
Զիս լացէք, որ որբացայ  
Որբոց եղբօր \*, կոյս, մոյրացայ՝  
Ես կարօտ պահպանութեան  
Պահպան Հօր տան նստայ»:  
Տիւ գեղածիծաղ յետ յորդ անձրևաց  
Անէք ԹԱՆԿ յետոյ իւրոց արտասուաց.  
Զոր վճռեաց Աստուած թագուն խորհրդով՝  
Օտարականին կցորդել կենաց:  
Ուր Հիմէն նոցուն ուրախ հարսանեաց  
Սրտի զսրտին զշանգոյց հիւսեաց.  
Ա՛վ հաստատագոյն շաղկտաղ բնութեան  
Զոր և բռնագոյն զերծ ի փորձանաց:

\* Ըստ բանի պ. Մ.Յ. Ակթեանի՝ ակնարկէ այս՝  
Երկուց զաւակաց կարապետ եղբօրն թանկայ՝ Մկրտչեն,  
որ այժմ կայ ի բաթավիտ անժառանդ, և Սովիայ՝  
որ դտանի ի ջուղայ:

Յորժամ Նախաստեղծն միւյն ի Դրախտին  
Հրջէք տարակոյս տարտամ և լոին,  
Այլ իբրև ետես զերկնածին եւա  
Զեղանն նոր հրճուանք ի հոգի նորա:  
Այսպէս պատանին որ ցարդ աստանդէք  
Իւր ոչ տուն, տեղի, ոչ բնակ գիտէք,  
Երբ ի գեղ ԹԱՆԿԱՅ աչք բացան նորա,  
Քաղցրիկ գերդաստան զիւրեաւ տեսանեք:  
Ա՛վ յուսապատար օր ուրախութեան,  
Որ զգացողութեամբ խիստ զմայլական  
Փոխէիր զՏին ի նոր ինչ Աղին,  
Գոգջիր բերկրաւէտ քան գլուխմականն:  
Ա՛չ այսօրինակ միտք պատկերահան  
Իւր զմայլանաց հանէ կերպարան.  
Կամ երջանկութիւնք զի՞նչ իցեն արդեօք  
Թէ ոչ՝ հաճութիւնք ի կարծիս միայն:  
ԱՅԼ ՄԵՔ ի Հիմէն, որ նաւակատիս  
Առնէք Դից յուրախ սոցա հարսանիս,  
Եւ ի թաս կենաց Հարսն ու Փեսային՝  
Այսպէս քնարէք զերդոց ստեղիս.  
Զեր հարսանիք  
Հաճեցան Դիք,  
Տալ աշխարհի  
Նաւակատիք,  
Ա՛վ սիրասունք,

Ո՞վ ուրախ զցյդ,  
 Ո՞վ ուրախ, ուրախ երկուք.  
 Տարաշնարհիկ  
 Երջեալ մանկիկ,  
 Ի կոյր բաղդէ  
 Տանջեալ չերիք.  
 Ըրդ յերջանիկ  
 Ի թԱՆԿԱՅ գիրկ  
 Երր յԱղենի  
 Հանդի՛ր չեշտիկ:  
 Ո՞վ սիրասունք,  
 Ո՞վ ուրախ զցյդ,  
 Ո՞վ ուրախ, ուրախ երկուք:  
 Մի երկնչիք  
 Ես ձեր չիրիկ  
 Պինդ կապեցի  
 Խղել հնար չիք.  
 Սիրտ ընդ սրտի  
 Յորժամ կապի,  
 Թէ՛ւ մահ գոյ  
 Ոչ խղանի.  
 Ո՞վ սիրասունք,  
 Ո՞վ ուրախ զցյդ,  
 Ո՞վ, ուրախ, ուրախ երկուք:  
 Կարկեշտութիւն  
 Ի գիտութիւն

Խառնեալ ծնանի  
 Զանելծութիւն.  
 Զի ոչ աստիճաք  
 Ոչ ստորինք  
 Եւ ոչ անգութ  
 Նոցա չարիք  
 Կարողացին  
 Թէ՛ւ տքնեացին  
 Աղդել անեղծ  
 Բարեաց նոցին:  
 ՅՈՐԴՈՐ  
 Չեր չարսանիք  
 Ճաճեցան զիք  
 Տալ աշնարհի  
 Նաւակատիք.  
 Ո՞վ սիրասունք,  
 Ո՞վ ուրախ զցյդ,  
 Ո՞վ ուրախ, ուրախ երկուք:  
 Գեռ տաղեր չիմեն զաւուր պատշաճին  
 Խաչ պահապան կայր սրբութեան նոցին,  
 Այն ինչ քաղցրացաւ Բարձրեալն Եհովա  
 Նուագ օրհնութեան ընդունիլ սոցա:  
 Հարսն սիրահար զհուր սրբարար  
 Գնէր ի սրտի Փեսային բութառ

Յորուստ անուշունք մաքուր մաղթանաց  
Հարսանէքաժինք գնայր առ Աստուած:



## Ե Բ Գ

Փա՛ռք քեզ Տէ՛ր Յիսուս անուն ինկարոյր  
Փա՛ռք քեզ Տէր փառաց, ընդ Հոգւոյդ և Հօր,  
Որ պարգևեցեր անձառ բո գլուխ  
Անփորձ ի չարեաց պսակել զայս օր:  
Յաւուր Հարսանեաց մերոց Քա՛րերար,  
Զաղերս մաղթանաց քաղցրութեամբ Ընկա՛լ,  
Խորհուրդ միութեան քոյ ընդ Եկեղեցւոյ  
Հաստատեա ի մեզ յայտնութեամբ սիրոյ:  
Ի՞սյս օր վաղանցիկ շնորհեա մեզ քանոն  
Զափել միշտ սովին զկենաց կարճութիւն,  
Գիտել զի չափով կարգես զամենայն  
Հսիրել զունայն ձգութիւն նորուն:  
Թէ կարօտիցիմք անզրաւ կենաց  
Որ զուր բաղձանք են կոյր մաշկանացուաց,  
Ի քեզ Տէր, միայն ուսցուք գտանել  
Քոյ յառագաստի մաքուր Հարսանեաց:  
Եւ արդ իսկ՝ Փեսայ Սուրբ Հոգւոյ Յիսուս  
Էջ ի յանկողին քեզ Հարսացելոց,

Ի ննջել մերում, Լե՛ր մեզ սիրտ արթուն,  
Զի քեւպաշտպանեալ լիցուք քաղցր ի քուն: —  
ԱՊԱ ՏԱՆ միմեանց հասրոյր սրբութեան  
Եւ մեկնին յորիշ յորիշ ննջարան,  
Ուր իջեալ յերկնից Հրեշտակ հարսանեաց  
Զառագաստ նոցա պահեր յամբծութեան:  
Քուն յարտեանունս սիրածնունդ աչաց  
Նոցա, մեղկութիւն զիւր պահել չիշխաց:  
Արարան գիշերք՝ ոչ թէ ի հանգիստ  
Այլ ի հանգէս քաջ՝ անարատ Տիկնաց:  
Դեռ չէր յարուցեալ զկես գիշերայն՝  
Ասկի դիցուհին շէկ Արշալուսեան,  
Յորժամ վաղագոյն յառնէր ԹԱՆԳԻՍԱՅԻՒՆ  
Նուիրել երկնից կանուխ զօրհնութիւն:  
Հարսն բօղաղարդ՝ գլուխ մայրանայր  
Որբ եղբօրորդւոց, որոց սիրահար,  
Ալրէր զնոցա արտասուս աչաց,  
Հոգսոյր անտրատունջ զպիտոյս կարեաց:  
Եւ արծարծանէր զբորբորիւն սրտին  
Ի սէր Աստուծոյ, ի սէր Ընկերին.  
Շուշ գնէր ինքեան պյրասէր լինել  
Եւ պարկեշտութիւն զարդ ամենազին:  
Աւստի և Հարսունք պարտիղաց համայն  
Ողիք աներեւ աչաց մարդկութեան,  
Քաղեալ ի ծաղկանց զէռութիւն կենաց  
Բերէին նմա ձօն անմահական:

Թամրութեամբ թարշամ սրտի սիրուհւոյն  
 Խոնջեալ անդամոց կազդոյր զօրագոյն,  
 Որմզդի միայն ումզ յաւէժական  
 Անմաշել նովին զիւր Աստուածութիւն:  
 Դու կին, որ խորդաս ի քուն թանձրագոյն,  
 Թէ զինչյայն պատիւ հան զմահացուն,  
 Հարց Թւանկիւնթուննեթ՝ քեզ ուսուսցէ նա՝  
 Թէ միայն անդուլ իւր Աշխատութիւն:  
 Յատկութիւն իրաւ, «Աղնիւ Ծննդեան»  
 Փառք ամենաշուք շքել Տիկնութեան,  
 Որով որ վարեաց, անկարօտ պահեաց  
 Զիւր տուն, յերեսաց դառն աղքատութեան:  
 Այլ աւաշը յետին կարգի ստըրկաց  
 Առ որ ոչ շողայ ճառագայթ փառաց,  
 Ծուլութեամբ ի քուն լինին յարթնութեան,  
 Եւ գոգ թէ մեռեալ ի քուն անդ իւրեանց:  
 Ստրուկ ծնանին, ստրուկ ծերանան,  
 Եւ ստրկութեամբ թաղին յաւիտեան.  
 Քուն և ծուլութիւն զո՞ երբէք հանին  
 Յաղբեաց անտի յաթոռ հարձրութեան:  
 ՈՐՊԻՑ ուղեոր յանջրիս տապուտ  
 Յանկարծ աղբեր ինչ ական գայցէ մօտ,  
 Եւ ի զովութիւն ջուրց ականակիս  
 Դեռ չիցէ միւրեալ լեզուն ծարաւուտ:  
 Ի վերայ եկեալ հինից թշնամեաց  
 Մղեն կտտամօք յանջուր անդորայս,

Ապառնան զարիւն առն ծարաւոյ  
 Յագ արբուցանել ծարաւին սրոյ:  
 Այսպէս պատանին՝ այն ինչ կաթոգնի  
 Ի գրկաց թւանկաթ ծծէր ի հոգի,  
 Սողոխ Ամբրոսեան, քան զոր քաղցրագոյն  
 2էր մատուռակեալ նմա բծութիւն:  
 Գունդ երդուեալ դիւաց, որ ի Դմբաւանդ՝  
 Դարան, դաւ գործեալ դանդաշէին անդ,  
 Տեսեալ Տենչալեաց փայփայիլ այսպէս  
 Պահ պատեհ վարկան մղիլ ի հանդես  
 «Առն եղե կեղծաւոր՝ Խաչելոյ գերին  
 «Նա, որ հեշտութեամբ քամահէր զուղին,  
 «Փոթորկեսցուը, Քաջք, զաւուրս հարսանեաց,  
 «Խամբեսցուը զտօն ենդութեան նոցին:  
 «Հոգովը աշխարհի աւուրբ ծանրացան,  
 «Անզբաղ մտաց հոգը յաջորդեցան.  
 «Արդ հաղիւ կարէ հայթայթել զհաց,  
 «Քան թէ ի պայքար մտանել դիւաց»:  
 Աստ յաջող սոցա և Արքայ Պարսից  
 Ի մահկանացուաց յաւելյը ի Դիս,  
 Եւ խովովութեանց մահաբեր Պարտոն  
 Յամպոց տիրութեան տեղայր արհաւիրու:  
 Իբրև թունաւոր շունչ կատաղի շան  
 Երկպառակութիւնը յօդ անօսրացան,  
 Զոր ծծեալ մարդկան ի ցինդ մոլեգին  
 Շիոթ ի շոինդ զիրերօք հարան:

Յարեան ճապաղիս յոդի ապաստան  
Որպէս նաւ յալիս՝ ծփայր Պարսկաստան,  
Յորժամ յարուցեալ անմահ վրիժուն,  
Վավաշին աղուաշ դիմէր բինահան:  
Շարժեալ ի հեռուստ զիւր գունդ հսկայից,  
Զուրուական ցնորս պղտորուն կրից  
Տայր զրկողութեան զգլուխ զօրուն  
Եւ քաջիս նախանձ քաջ նիզակակից:  
Որ արիւնազանդ ի մարտին բռսոր  
Քերէր ի բազի ըզտանջ և տրոր,  
Կնձիս ընդ կայթիս ուրախ հարսանեաց  
Յոգի փեսային հարստել ի խոր:  
Քիլտ նորա ունայն ի վարձուց հանէր,  
Ի պահանջ՝ զուրաստ նհանջ արկանէր,  
Եւ փոխան զարդուց սուրբ Հարմարանին  
Զարհոյր սեամեոյր զնովաւ ձգէր:  
Հոգ ի հոգ կուտէլ, վարան ի վարան,  
Զնախանձ ի խանձ բերէր բաջութեան,  
Որովք կարիցէ զնա վհատեալ,  
Յաղթանակ վարել պագչոտ ցանկութեան:  
Զամ մի բովանդակ թողոյր ապագործ՝  
Զոր գիտէր զհաց ուտել վաստակոց.  
Եւ ապա զնա, զգերդաստան նորա,  
Յաղտ հիւանդութեանց ծիւրէր անխանայ:  
Տինդ անագորոյն ունի զիւսայն,  
Հարսին հասանեն երկունք ծննդեան,

Եւ մատաղ մանկունք իբրև դիակունք  
Կող ի կող տուեալ հեծեն անկենդան:  
Աղիսից արժան, անբազգ գերդաստան,  
Մնջէր անխամ զերթ զի ի դամբան,  
Ում ոչ այցելու, ոչ քոյր ու եղբայր,  
Ո՛չ ազգ ընտանի, ոչ միփթար կայր:  
Ուր վրէժ այսպէս: Անդ արշին Մինիս  
Սոցա յանդիման առնէր զիւր Եգիս.  
Որով բարացեալ գողտրական սրակց  
Գրէին բնաւ, և ոչ մի կսկիծ:  
«Ո՛ւշ լիցին, որդեակ իմ համբերատար,  
«Որ բիւր բոնագոյն փորձութեանց տարար,  
«Զի այս գործ է Մի Երկնից Տնտեսին  
«Յայս օրինակ հալ դնել զիւր ոսկին:  
«Զկուշ նա ոխ ընդ անարդ տղմիդ  
«Զէ նա և ոսոխ բարի վիճակիդ,  
«Այլ զի Ճանապարհն ի Տաճար փառաց  
«Անկանի զմիջով անհուն փորձանաց:  
«Վասնորոյ և բեղ հաճեցաւ Աստուած  
«Հմուտ փորձողին դնել ի քուրայ,  
«Զի զառաքինեաց առցես յաղթանակ,  
«Զաստուածաշնորհ պսակ պարծանաց»:  
Որովէս ընդ թանձր ձեամբ հեղձուցեալ շուշան  
Որ գեղածիծալ ի բանիլ գարնան  
Սուղ ի սուղ ոգի առեալ հայթայիթի  
Յառնել վերստին ի հողոյ անտի:

Այսպէս ԹԱՆԿԻՆԱԹՈՒԿԻՆ ծանունց յետ երկանց  
Երբ ի հող մահու զիւր անդրանիկ թաղեաց \*,  
Խընին ապազօք ջանայ գայլթ ի գոյլթ  
Առն հասանել բաղմօրեայ մահձաց:  
«Փեսայդ կաթոդին, հոգք զբաղանաց  
«Ինե՞ւ շուրջ զքեւ՝ պատին դարձադարձ.  
«Մի վհատիր, Սէր, վկայ են Երկինք  
«Զաւակ արդարոց ոչ մուրանայ հաց:  
«Հոգաս թէ յօտար աշխարհի այսմիկ  
«Չխմբին առ քեզ սրտցաւ ընտանիք.  
«Աստուած է քո Հայր, բարեկամ՝ Երկինք.  
«Երբ ի նեղութեան չեծես թշուառիկ:  
«Հոգաս թէ Թանկայ օտար ինչ թուին  
«Տանել դառնադդյն վշտաց քան սոսին.  
«Ո՛չ— Որպէս բարեաց՝ նոյնպէս և չարաց  
«Անբաժան ընկեր է քոյ Ամուսին:»  
Ընդ բանիս նշոյլք յարփային գիմաց  
Եւ գութ ընդ գորով ցոլանայր ի բաց  
Անդ և Աստուածեան Սէր ոսկեփետուր  
Վաշտակիր սրտին զնէր զեղ և դիւր:  
Զնաշխարհի Սէր, ի բրեւ հիասքանչ  
Աճէր ի կարիս սոցին բաղմատանչ.

\* Անդրանիկ եւ արու զաւակս այս Մեսրովբայ՝  
թաղի ի հիւսային տապանին Եկեղեցւոյ Տիրամօրն,  
որ ի Մէրգան թաղի Քաղաք:

Առ ոչինչ գրէր զդիպուած բաղզին  
Համօրէն զստորնոց խմբին:  
Արդարեւ խնդա, Փեսայդ երջանիկ,  
Որ ունիս զայսքան ամուսին քաղցրիկ.  
Իւ գառինք վշտաց՝ բաղցունք են կենաց,  
Եւ կեանք մշտերան ընդ աստուածալանց:  
Եթէ յօժարին կին ածել մարդիկ,  
Ո՛չ հարուստ Լիցի, ոչ յոյժ գեղեցիկ,  
Ա. Յ. Առաքինի, թէ գտանիցի,  
Նոքին յաւիսեան ապրին երջանիկ:  
Ո՛չ որ ի պչըանս կամ սին ի սուգոյր,  
Տքնի հանապազ ծեփել զերես իւր.  
Շամ Լիցի նոցա պարդեւ բնութեան,  
Քան ձեռակերտաց արուեստին շնորհ:  
Ո՛չ որ զամենայն վատնէ զիւր կէս օր  
Յայս կամ յայն տարազ զգենուլ զըոր,  
Ոյր ի թոյր, գանգուր, թէ չիցեն չինած  
Սաթեան հոպոպիք, չեւանէ ի հիւր:  
Մանաւանդ որոց՝ չիք եփած ու կրօն,  
Կամք՝ Աստուած նոցա, և զէնք՝ են լեզուն.  
Որդունք դժոխոց կերցեն զայնպիսին,  
Կնոջ լեզուանւոյ սոյր շրջի անտուն:  
Որ գինէ հարի, մի՛ Լիցի քեզ կին,  
Զի գինի և զեղ կոյր են երկոքին.  
Գուցէ փոխան քեզ՝ առն օտարի՝ նա  
Զիւր կոյր զկուրոյն՝ զառագաստ բանայ:

Նա՝ շատաշթիկ զպմի կամ զաղիկ  
 Մի առնուցուս կին, պիշտ են սյնալիսիք,  
 Որ չե ծանուցեալ թէ ո ստոյդ այր,  
 Անստոյդ արանց լինին սիրահար: —  
 ԶԱՅԴԻՆ ԿԱԹՈԳԻՆ, այսպէս ըզտարին  
 ՎՃարէր մինչև ցԵշունն առաջին,  
 Յորժամ չարաշար Խորհուրդ զրկանաց \*  
 Ի նոր կորստեան մտանէլ Հնարս:  
 «Թուրի թէ այսքան հարուած անհնարին  
 «Չազդէ անզգայ հոգւոյ թշուառին,  
 «Կամ սէր ինչ օտար ի ցոփ տռփանաց  
 «Բունեալ ի սրտին քամահէ վշտաց.  
 «Կարծէաբ ովք քաջք, թանզօր մահացուն  
 «ԱՇԽԲԱՆ աղիսից զիմանսոյր տոկուն.  
 «Եւ հիմ ոչ, — զի զոր՝ Խոլք ածեն մղծուկ,  
 «ԹԱՆԿ թօթափէ զայն անոյշ հայեցիւք:

\* Ակնարիէ չորեքին կառավարչաց Սամեան Ամեանափրկեան ճեմարանին, որք արդարե զրկէին զՄեարով՝ զայնպիսի անզուգական վարժապետ, տալով նման վարձ զիւս գումարին՝ կոսկեալ վասն այնր ի Մաղրասայ, այն է՝ 80 թուաման պարսից առ ոնն տուեալ, և զիւս կէս 80 թուաման պահէին առ ինքեան՝ վասն այլ մանր ծախուց ճեմարանին: Եւ Մեարովք պահանչէր զամբողջ գումարն, յանձին առեալ զամենայն ծախս ճեմարանին, խոստանալով Անդղեարին ևս ուսուցանել, որպէս յայտնի լիցի յՕրագրութենէ Անդղեարչաց, որ ունի տաղալըիլ ի նորոդ կենսադրութեանն:

Յ. Ք. Ա:

«ՄՆԱՍԳՈՎՔ նմա, դիւաց ի դորով  
 «Յայսքան վրդովմանց նստիլ ապահով,  
 «Որով խուժանիդ իրաւունք տացուք,  
 «Համարիլ ըզնա յաստուածաղանց ոք:  
 «Եւ օրինակին կամակորութեան  
 «Լինիլ հետևող մերայոց սատան.  
 «Յայնժամ ոգեսպառ կարօտիմք զանից՝  
 «Նուաձել զայնքան մեծ ժողով ժանտից:  
 «Ե. ՅԼ Հնար չկայ, զայս Խորհիմ բարւոք  
 «Զի խօլականացդ իւրաքանչիւր ոք,  
 «Փոխանակ հոգւոց մտեալ ի մարդիկ  
 «Զերախիտիս նորա ոտնկուս առջիք»:  
 Ընդ բանիս՝ Զրկանք, Դեւ զարզանդահոս  
 «Ծպտի սրբազան յայն Եպիսկոպոս \*:  
 Որ հեղման արեան անպարտ օտարին  
 Առաջնորդ լինէր չարագունդ խմբին:  
 Իսկ Յիմարութիւն՝ զաւագ, անաւագ  
 Առ խաւար Խորին սուզէր բովանդակ,  
 Կէս ի սա մտեալ և կէս ի նոսս,  
 Մարմանացեալ դիւօք լնուն զջուղա:

\* Ակնարիէ ի Յովհ. Եպիս. մականուանեալն քուրդ, որ Առաջնորդ էր Զուլպայու, և որ ՚ի սկզբան յանձափս սիրել զՄեարովք եւ միսիթարէր զնս ամեանցնիւս այլ ի վերջոյ եղեւ մի ի գլխաւոր թշնամեաց նորա, միաբանեալ ընդ կառայարիչս ճեմարանին, և հաւասար ընծայեալ զապարտաթեանին զնմանէ:

Յ. Ք. Ա:

«Թա հալածական» ասեն միաբան,  
 «Չարեաց ի չարիս գնացէ՛ կործան.  
 «Բայց որովհետև աստի էառ կին,  
 «Թողցուք զթԱնկ \* մեր, տանի՞ Դրսեջին»:  
 Քած դիւաց ոմանց եղերականաց  
 Ի կերպ սրտացաւ նոցուն ընտանեաց,  
 Խոռուածամ ընդղազը, անդուսպ հոլանի,  
 Զեղընդունս յերես, թախիծ ի սրտի,  
 Քան գուժել զթԱնկ ի կեղծ ի լալիս  
 Նկարել յարտաքս և սուս զայն կսկիծ,  
 Զոր ցուցանէ բող ի ճոխ սեղեխ իւր  
 Յաւելու նովին միայն ըզ սըխուր:  
 «Ան՝ աւ բաղդ դիպաւ մեղ, վայ ափսոս, մեր քոյր,  
 «Սեա՛ւ լինէր, օշ թէ, բո հարսնութեան օր  
 «Սեա՛ւ քող ձգէիր ի սուդ փեսայիդ,  
 «Որով սեասիրտ եղեն քոյր բոլոր:  
 «Արդ զմեղ թողեալ, և յաշնարհ օտար  
 «Գնա՞ս թափառիլ, Աղաւնի՞դ արդար.

\* Գրէ պարոն Մ. Յ. Սէթեան, թէ այս բանք  
 ակնարկեն ի բանս պարոն Վեռնդայ Աւագեան, որ  
 գլուխ էր կառավարչաց ձև մարմնին, եւ թշնամացեալ  
 էր ընդ Մեսրովայ: Եւ քանդի զոյր ընտանութիւն  
 ինչ նոր մեջ թանկայ եւ Վեռնդայ, վասն այդք զրէ  
 ողթանի մեր: Այն այս Վեռնդ լեալ էր առիթ եւ  
 միջնորդ ամուսնութեան Մեսրովայ ընդ թանկայ:

Յ. Ք. Մ.

«ԹԱ՛նկ, հաւատա՛ մեղ, զի յանդուլ լալիս  
 «Զքէն հչեսցեն մեր ջնար սրտից:  
 «Սուրբ առաջնորդիս է այս հրաման  
 «Թէ ընդունիցիս, կարդալ զԱրձակմանն.  
 «Եւ ուր գնաս, ԹԱ՛նկ, խենդ ես թէ խելառ,  
 Զկայ ի Ֆուզա քան զդա լաւ այր»:  
 ԱՍՏ ԾԻՒՆՆԱԾԻՒՆ Ամօթիսածութիւն,  
 Յերանդ ինչ զթԱնկ շիկնեաց քաղցրագոյն,  
 Եւ ատենահաս Հոգին Աստուածեան  
 Բան Ճշմարտութեան եդ անդ ի բերան.  
 «Ա՛յ հարազատ կցորդք արեան  
 Կէս Ազդ և կէս Ընտանիք,  
 ԶՃշմարի՞մն խօսիք յունկան  
 Թէ յերազի ցնորիք:  
 «Թէ գուք նոյն էք, ամօք յառաջ  
 Որ քաջ զնա կարդացիք.  
 Արդ զի՞ զոգիս քորէ մարմաջ  
 Զարաբանել աւարիիկ:  
 «Լոյս արփենի, զնա ի մարմի  
 Որ ծաւալէր ջինջ շողիկ,  
 Արդ խաւարին վօհի որդի  
 Եւ մոլորի՞չ համարիք:  
 «Նա ի բարին նահատակի,  
 Շեղի և ո՛չ մի քայլիկ  
 Զօր ամենայն անխոնջ տքնի  
 Զիւր տուն պաշել երջանիկ:

«Յայս դառն ի դար, յորում զաշխարհ  
Կալան սով, սուր և հերձիք,  
Գէշ գաղանաց լիք յանդի Մայր  
Զիւր ստընդին անուշիկ.  
«Փեսայ զհարսն իւր սիրահար  
Ի փողոցին մուրացիկ,  
Զորդին թողոյր գժոտն Հայր  
Խոտ արածել. չտեսիք:  
«Նա անտրտունջ ի վտանգին  
Թէ՛ւ բոլոր վարձուց զիրկ,  
Որբոց ձերոց յոյժ կամողին,  
Խնամ ածէր, ւերախտիք:  
«Խէթ հպարտին հան ի հրդին  
Զանագորդն բախ սաստիկ,  
Եւ բռնագոյն դաւ Զրկողին  
Պինդ պարանեաց զիմ Հեղիկ:  
«Աներկեան իմ Սկային  
Թէ՛ւ հաղար թշնամիք,  
Զկարացին թիկն ի գետին  
Տապաստ դնել ստորինք:  
«Յորուստ թուի՛ թէ գերբնական  
Զգլիսով նորա փարին ձիրք,  
Եւ ի չարիս՝ զէտ բիբ ական  
Պահեն անփորձ երկնորդիք:  
«Արդ ի օթիկն, թէ բան զնա  
Կայ լմաւ փեսոյ կամ այրիկ.

Է գլխովին խորդ ի ԹԱՆԿՆՅ  
2'եռան յոդիս այդ կարծիք:  
«Աստուած զուգեաց, մարդ մեկնեսցէ  
Զիս ի գրկաց Դիւցաղին,  
Բարեաց որոյ կցորդ եղէ  
Զլինիցիմ և՛ չարին:  
«Այս ձեր խրատ, իմ ընտանիք,  
Դժբել ուխտին Հարսանեաց,  
Եւ սուրբ սիրոյն զեղծուլ կնիք  
Գոլ նշաւակ պուլնկաց:  
«Մնայք բարեաւ, թէ անտրատ  
Բարին, չարեաց ազդէ ինչ,  
Որպէս խորհուրդ ձեր և խրատ  
Ինձ ազդեցին և ոչինչ:  
«Զի թէ ընդ ծով և ընդ ցամաք  
Զգի ուղին խոտորնակ,  
Կուռ կապեցայ, ոչ բաժանիմ  
Այլ ուր երթայ, երթամ ԹԱՆԿՆ:»  
ՊԱՏՐԱՍՏԻ յայնժամ, տիսուր կարաւան  
Հարսն յառագաստէ վարել աքսորան.  
Նա՝ որ ամաչէր տեսանել զնիք,  
Ետես զամենայն վիշտս Օտարութեան:  
Ընդ սոր և ընդ ձոր, ընդ շեն և աւան  
Անձնամուլ անկան ի վտանդ համայն,  
Քաղցու, ծարաւոյ, տօթոյ և ցրտոյ  
Քաջ համբերութեամբ ժուժկալեալ տարան:

Ժողովուրդ յօտար, և յազդ անծանօթ,  
Սրտցաւ յընտանեաց, աղէնարշ կարօտ.  
Յագարակ Պարսից և յաւան Տաճկաց,  
Անցուցին զաւուրս վշտաբեր կենաց:  
Յորժամ փորձ երկնից զհայրն հաւատոյ  
Յաշխարհէ յաշխարհ ածէր աստանդու,  
Ենձկայրեաց սրամին միայն միսիթար  
Սարայն ծաղածին ողորմութեամբ տայր:  
Եյսպէս մանուկ Հօր բազմաթիւ որդւոց  
Ի թափառանս անդ, անքաւ նրանոյս  
Զթանկ չնորհեաց, իւ առնել դիտաց  
Յիւր իսկ Հայրենի զանկոիս ամայեաց:  
Առ ձեղ են բանք իմ, Զքնաղ Հայուհիք,  
Այրատէր լինել ի սիրտըս ձեր դիք.  
Քան զոր մեծագոյն սրբութիւն կանանց  
Չինդրէ ի ձենջ Վարձատուն բարեաց:  
Զի կին՝ որ զայր իւր սիրել չդիտաց  
Մի յայս ունիցի սիրելոյ զԱստուած.  
Հնաղանդ լինել, ուխտեցե՞ր, պահեա,  
Թէ քեզ մեղք անտուստ, թողիմ հոգւոյս գայ:  
Առաքինութիւնք՝ աճին ի փորձանս,  
Մարդ աստուածամերձ լինի ի տանջանս,  
Եւ Քրիստոսին, իրը Արև ընդ ամպս,  
Հրաշանայ հաւատ սուրբ ի հալածանս:  
Որդիս խունկ ի հուր բուրէ զքաղցրութիւն  
Ոսկի ի բովուն բանայ զիւր փայլիւն,

Ե' յսպէս ուղեխոնչ Հարսին առ Աստուած,  
Ի վշտին զեղզըր բարեպաշտութիւն.  
Զի մինչ նահատակ ճգանց ի հանդէս  
Հատին զուղին կուռ ընդ անհուն ասպարէզ  
Ի լերին բարձու ական աղբեր մօտ  
Հարին զլառն ի դալարին սէզ:  
Ուր անփոյթ զուսովք տատան հոպոպիք  
Իւր առնէր Զեփիւռ քնքուշ խաղալիկ.  
Զնաղելին գլուխ փեսային ի լանջ  
Զետեղէր մեղմով Հարսըն ուղեխանջ:  
Անդ յաստեղս ի վեր եղեալ հայեցիկ,  
Ի խորս խորհրդոց սուզան նորա միտք.  
Մինչ յուշի եկեալ ցայրն կաթոդին  
Այսպէս մերկանայր զգալոնիս սրտին:  
«Սիրելիդ սրտիս, դիտես զի որբիկ  
Սնաւ քյոհն Թևնկ, անուս և անգիրք.  
Գու, Սէր, փոխանակ Ուսուցչի և Հօր՝  
Ասա՛, ուստի մեզ այսքան մեծ չնորհ»:  
«Երկիր ի խոնարհ և երկինք ի վեր  
Այս ծաղկանց երփունք, այս աստեղաց գիր,  
Կամ զի՞ վեհ նոցա Հոգիս բանական  
Եւ ի նմա անձառ այս արարաւ Սէր»:—  
— «Զօրութիւնք երկնից, որ վերակացու  
Լինիք ամենայն մարդկան հանձարդ,  
Օգնեցէք երգոյս՝ որ ունի յինքեան  
Առարկայ զԱստուած, Սէր աղերսարկու:

«Աւա՛ղ վիճակիս դառնութեան այսմիկ,  
 Յորում միշտ ի վիշտ բերեալ աստանդիկ,  
 Պատեհ չկալայ, Քաղցրիկ Ամուսին,  
 Ճառել քեզ հերիք զգործոց Արարէն:  
 «Եւ այժմ իսկ ոչ է կարի անագան  
 Կատարել զքոյդ սիրոյ Հրաման,  
 Որ գահաւորեալ ի բիբ աչաց քոց՝  
 Մղէ զիմ քնար յերգս Արարէութեան:  
 «Յորժամ նախ աշխարհ՝ անբաւ մթութեան  
 Խշեր թևամիոփ, ոչինչ ուրուական,  
 Եւ զգեղեցիկ կարգ տիեզերաց  
 Սուզանէր ի վիչ անլինելութեան:  
 «Յայնժամ յառնէր Աէր Նախաստուածորդին  
 Համբյաւիտեան իւրոյ Ծնողին,  
 Որ չհանգուրժեալ վհին ևառնութեան  
 Մատչեւր գթութեամբ ի վեհ հօր ատեան:  
 «Եւ սաւառնեալ զիւր թե ոսկեփետուր  
 Խորհրդով Խաչին վառեալ ի բոսոր,  
 Եկաց առ նմա բարեխօս անդարձ,  
 Վասն եղանութեանց հանուր բնութեանց:  
 «Հայր Ամենակալ անհաս, անընին  
 Անուն փառաց քոց և կարք օրհնեսցին:  
 «Ո՞վ, ի քո դէմս արդ՝ իրու գեղեցիկ  
 «Փոյլին նորասքանչ այս զարմանալիք:  
 «Աշխարհ գերաշէն լրիւ բովանդակ  
 «Եից բոլորից նախկին գաղափարը

«Տինա հրեշտակաց և մարդկան համբուն  
 «Պատկերաւ բանիս աստուածոց նոցուն:  
 «Որք այնքան վճիտ ի քեզ նշմարին  
 «Բատ ձեւոց ի միտս արհեստաւորին  
 «Մինչ թուել անդուստ թէ աստուածութիւն  
 «Է արարածոց համախմբութիւն:  
 «Այո՛, ինքնազօր, Հայր անբաւ բարեաց,  
 «Գիտեմ զի կաս միշտ անփորձ ի հարկաց,  
 «Տէր գոլով փառաց՝ չես կարօտ ուրուք,  
 «Որ յաստուածութիւն քո հանցէ զըռւք:  
 «Այլ զի տալ ի գուրս, կամ սփուել զարտոն  
 «Գործ է սեպհական բնութեան բարեցն:  
 «Եւ այն զի բարին անհաղորդական՝  
 «Է արև անլոյս, և զի անկենդան:  
 «Յայս վայր հայելի էից ցուցար Հայր,  
 «Ի քեզ ունելով զնոցուն գաղափար,  
 «Խսկ արդ տնըր նոցա լինել հայելիս,  
 «Ընդաւ ինամոց Հաստչելի բնաւից:  
 «Բա՛ ներես մինչ ե՞րբ, տարտարոս վհին,  
 «Պատել սամին թես զփառօք բոյին.  
 «Մինչ ցեղը ւարարածք յաղիս նուագաց  
 «Ո՛չ հանցեն առ քեզ զօրհնութիւնս իւրեանց»:  
 «Զայս իւրեւ ասաց, անդէն լուեաց Բան,  
 Յոտն եկաց Հոգին Միջնորդ քաւութեան,  
 Որ արկաւ զիւրեստ զօրինին վակաս  
 Իւրեւիեան ասեմ շնորհաց զփառս:

«Մատեաւ Մարգարէս այս անախտակիր  
ՅԱստուածահանդէս Տաճարին Դարիր,  
Ոյր իբրև բացաւ բերան բարեբան,  
Գաղտնիք յաւիտեանց ընդ ինքեանց բացան:  
«Յորմէ հետէ Բան, վասն արարածոց  
Շարժեցեր զգութ վերին խնամոց  
Տեսիլ տեսանեմ խիստ զարմանաղան  
Ի բոյդ փողիողիլ փառաց կերպարան.  
«Այս է Մարդկութիւն պատուիրանաղանց  
Ապերախտ ընդդէմ Արարչին բարեաց,  
Որ մեղօք զմահ, մահու զգեհեան  
Ստացաւ հոգւոյն օժիտ սեպհական:  
Նա ձաղանս կապանս, վիշտ և նախատինս,  
Նզով ընդ դսրով և ցաւս անհնարինս,  
Փուշ, պսակ և խաչ, խաչ մահանուէր  
Քեզ Բանիդ մարմնով մնայ համբերել:  
«Քան զարարչութիւնն յոչընչէ զաշխարհ,  
Փրկութեան մարդկան յաւէտ քաղցրանայր  
Բարերար Բանին, որ Հօր և Հոգւոյ  
Համահաճութեամբ զարարածս արար:  
«Առաստաղ երկնից, դիրք աստեղատան  
Չեղուն վերնայարկ մեր առօրեայ տան,  
Աստեղը և լուսին, և Արփիդ պայծառ  
Փառաց Արարչին լինին պատմաբան:  
«Երկիր այս տեղի մեր թշուառութեան  
Իբրև զարքայի կերտեալ Ապարան

Զարար հարթ զօրէն ծաւալ սկտեղ  
Այլ խտաեաց իբրև գունդ Արուեստական:  
«Յոյր երես խաղան վճիտ գետորսոյք  
Ծածանեն ծովուց ծիրանին ծփանոք.  
Աստ բղինն աղբերք առուս զովութեան  
Անդ քողէ զդաշտ արծաթին լճակ:  
«Թաղիազարդ աստեղբք յարկ հաստատութեան  
Աստղազարդ ծաղկամբք անդ և անդաստան,  
Զարդարթեալ իբրև դրախտ հրաշագեղ  
Անխօս քարոզեն զԱրարչին ինամ:  
«Հրեշտակը երկնից և Հոգիք մարդկան  
Ի հոգւոյ նորին յառաջ բղիեցան,  
Տիսդ համանման Արարչի իւրեանց  
Զսկիզբն ունին, այլ ոչ և վախճան:  
«Յորուստ նաւանի սէր գեղապատար  
Բորբոքել զսիրտ հրով մշտավառ,  
ԶԱստուած ի վեր բան զամենայն բարի,  
Զեղբայր ըստ անձին սիրել հաւասար:  
«Այլ վախեցաւ նորաստեղծ այս Աէր,  
Եւ ո՞վ անվրէպ, թէ ոչ՝ միայն Տէր.  
Չեկաց յոր ինչ էլն, այլ յաստուածանալ  
Չեռներէց եղեալ կորեաւ չարաչար:  
«Վասն այն իլաւունք արդար բնութեան  
Թող զնա ի կամս պագչոտ ցանկութեան,  
Զորս ապա մաքրել բաւական չեղեն,  
Ոչ ջուրցն չեղեղք, ոչ աեղք հրահոսան:

«Բանսարկուն դրօշյաղթութեան ամբարձ,  
Դժոխիք հանրածախ զիւր ժանիս երաց,  
Եւ անագորջն գերանդի մահուն,  
Զամենայն հասակ անխնայ հնձեաց:  
«Որոց չհանդուրժեալ Քանին դժալից  
Ել ի ծոցյ Հօր՝ որում կամակից,  
Եջ յարդանդ Կուսին, մարդացաւ Աստուած,  
Փրկել զմարդիկ ի մեղաց իւրեանց:  
«Բազկաւ հողեղէն յաղթեաց բանսարկուին  
Կորդեաց զհոգիս ի հաղթից նորին,  
Նա մահու իւրով զմահ խայտառակեաց,  
Եւ յարոց զմել ընդ իւր վերստին:  
«Ճնորհեաց Խրախոյս Խաչեւ փրկելոց  
Կոուլ զտեղի նեղաց անկելոց,  
Մարդ աստուածանալ կամեցաւ, կարեաւ,  
Աստուած մարդացաւ, զմարդն ապրեցոյց:  
«Արդ բարեբանեալ այս Փրկիչ Յիսուս,  
Կայ մեզ ապաւէն մեզօք մեռելոցս.  
Զի թէ մեղիցուք, զնա, ո՛չ զայլ ոք  
Ունիմը առ Աստուած անդարձ Բարեխօս»:  
ԸՅՍՊԻ Նուադէր Գալլադայ որդին  
Զարարչապատում երդոց Ստեղին  
Ոյր զմայլարար ներդաշնակութիւն  
Հարսին ի թմբիր խոնարհէր զոգին:  
Ա Զըդ երջանի՛կ. —որ այն ինչ յԱշան  
Ի գիրդ Սհնդայ մշտերան լերան,

Ի հոգոց դառինց նստեալ անզբաղ  
Առնուին ճաշակ նոր զերանութեան:  
Այլ աւաշ զ ո՞ւր է Վորդ երջանկութիւն  
Զոր ունիլ կարէ յասախս մահացուն:  
Այն ինչ կեանք ստուեր, և բաղտ մշտերեր,  
Առնեն զայն նմա մտածին անուն:  
Աւաշ զ սնոտեաց մարդկային յուսոյն  
Որ թիւրէ զտենչ ի սին մեծութիւն,  
Եւ կուրացուցեալ զհետ ստուերաց  
Քեցէ զնոսա յիսկական բարեաց:  
Զի յաւուր միում մինչ սովորաբար  
Ճեմբը նազելին յերանաւէտ վայր,  
Խանդացեալ ընդ այն դաժան Ասրոպեայ  
Խոզէր զկենաց զարծաթին զլար:  
Ասէ. «Զի՞նչ յանդգնութիւն մահացուաց է այս  
«Իւրել զերաւունս աստուածոց իւրեանց,  
«Եւ անմահարս ամբրոսեօք նոցունց,  
«Անահել զանձինս արհաւրաց մերոց:  
«Դուք յիմար հարսունք, կասերո՛ք ի բաց,  
«Բաժակել դմա զուղիս փափկութեանց.  
«Զի թէ մահացուդ այդքան զեղազան  
«Ունիցի նաև կիրս անմահութեան:  
«Յինքն զրաւէ սէր համբուն զդից,  
«Հանէ և զձեզ յաշաց անմահից.  
«Զի՞նչ յայնժամ լիցի Ճեր վիճակ արդեօք  
«Թէ ոչ զանվախճան հեծել զկսկիծ»:

Զայս իրեւ ասաց վեհ ձակատագիր  
 ԶՅաւէրժարսամբը պատեաց արհաւիր.  
 Նա կենաչոսան ծաղկունք պարտիզաց  
 Սկսան անդէն թօշնիլ թառամիլ:  
 Աստ ընդարմանայր Հարսըն սիրահար  
 Յանակնունելիս ընդ այս պատահար.  
 Եւ զերժ զոհ ընոիր ծաղկօք պսակեալ,  
 Առ կաթողին իւր, ծունկ կթուցեալ դայր:  
 Զառն ունակութիւն գիտէր հոգածու  
 Զսպէր գթութեամբ զիւր անսուտ լեզու  
 Զի մի՛ խսկան պատմութեամբ անցից  
 Կտանացէ զոդին յանդար ի կոկիծ:  
 Տե՛ս որքան Շնորհը իշխէին սրտին  
 Տե՛ս քանի՞ ինսամ ունէր Դիցուհին,  
 Որ զնախատես զիւր մահուն օրհաս  
 Թագուցեալ յառնէն, այսպէս առարկեաց.  
 «Թէ հաւատաս Աստուած խօսի  
 Ցոդի խռնարհ զզականի,  
 Ինձ նա այսօր տեսլեամբ ազդեաց  
 Հրաժարել աստի ի բաց:  
 «Արդ մերձենայ ինձ ժամանակ  
 Քեզ ծնանիլ զանոյշ զաւակ.  
 Բայց յանդիման կրեմ աչաց  
 Զանտանելի աղետս երկանց:  
 «Ի Տաճկաց մէջ թէ բնակի  
 Անմերձաւոր Հարմնիկ յղի,

Գուցէ ձախող գիպաւ իւիք  
 Զ վտանգ կրկին վտանգիցի:  
 «Թէ գիտեմք ուզի մահուն  
 «Յամենուրեք գոլ միւնոյն,  
 «Այլ զի կարեմք, մի՛ վերջացուք  
 «Պատսպարիլ սուրբ Օրինօք:  
 «Առորք է Աստուած, սուրբ և կամի  
 Ախնիլ, որոց կոչին որդի,  
 «Արդ ի Դավթէժ, հան աստի զիս  
 «Կեալ սրբութեամբ սրբոց միջի:  
 «Այլ քեզ մի՛ խորդ երևեացի  
 «Մաղթանք մատաղ քո Լծակցի,  
 «Որ լաւ գիտէ զմահ մօտալուտ  
 «Քան վարկանել քեզ անլսուրդ»:  
 Փեսայն խանդակաթ լինէր մտասոյզ,  
 Չորոշէր Ճշդիւ զվճիռ խնդրոյս.  
 Քանզի ի բանից զոր խօսեցաւ թԱնկ,  
 Զեղան ի հոգին խորհուրդք խօլականք:  
 Զէր այսօրինակ անկեալ Պետաղոս  
 Յարուեստահնար յիւր Լաբիրինթոս,  
 Որքան սա՝ յանել ի մահ փարանաց  
 Անհանդիստ մտօք յածէր գարձադարձ.  
 Զի անտես առնել զաղերս Անձկալոյն  
 Օտար էր նորա անկշիռ սիրոյն.  
 Խսկ պահել առ իւր, կամ տանիլ յայլուր  
 Թուէր նմա գործ՝ յոյժ վտանգաւոր:

Զի աստ պարսկական խտիր Աղանդոյ  
Արգելոյ զընտիրս ի պարտեաց մարդոյ,  
Կի՞ ծննդական՝ թէ Քրիստոնեայ,  
Թէ և գառն անմեղ, պիղծ է առ նոսա:  
Զի թէ՛ւ օգնութեան իցեն բաւական  
Վտանգեցելոյն, հուպ չմերձենան,  
Այս անագորոյն գժնդակութիւն,  
Համարի նոցա Աստուծոյ պաշտօն:  
Իսկ անդ ի քաղաք հանել օտարին  
Ուր ոչ աղդ էին և ոչ ընտանիք  
Միայնակ ըզնա, կամ գործ զիւր թողուլ  
Զմիջոց նորա խորտակէր զիւրիկ:

Անաւարտ



ԺԱՆՈԹՈՒԻԹԻՒՆ

Ավարտամք, զի սրտաշարժ Եղերերդիթիենս Անկատար թողեալ է ի Հեղինակէն, որպէս և ինըն ծանուցեալ է Համառօտիւ ի Յառաջարանին:

Բառն սէր Քերթողիս առ իւր Միրուհին չըքնազ յայտ յանդիման տեսանի՝ ոչ միայն ի 1076 առ զեց երգոց, այլ եւ յօրագրութեանց իւրոց եւ ի թաճգարան թաղիսդեանց անուանեալ Տաղաչափութեանցն, որ թէպէտ քանիցս ընդարձակ քան զայս,

քայց գարձեալ անկատար մնացեալ: Արժանի վերծան նութեան է այս գործ սքանչելարուեաս բանաստեղծութեան, զոր եւ ունիմք տալ ի լոյս՝ եթէ լիցի մեղյածողութիւն ի Տեառնէ:

Տիկին ԹԱՆԴ կամ ԹԱՆԴԻԽՍԹՈՒՆ, վախճանեալ է ի Գալրէժ յամին 1837 ի Կոյեմբերի 18. ի ծաղիկ հասակի 21 ամաց, եւ թաղեալ կայ ո գաւթի Եկեղեցւյն Գալրիժու, այսօրինակ ունելով Տաղմանագիր ի վերաց, շարագրեալ յԱմուսնոյն սիրայնոյ, որպէս եւ յիշառակեալ ելք ՚ի կենսագրութեան Թաղիագեանի յերես 98:

(Տաղմանագիր)

ԹԱՆԴ ՄԵՍՐՈՎՃԱՅ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ  
Օտար յիւրոց Հայրենեաց  
Ի ծնանել մարդ յաշնարի  
Ինըն ծնաւ առ Աստուած:

Գուշ սիրելին իմ Պարոն Մեսրովը Յ. Սէթեան,  
թէ գերեզմանքարս այս է սեաւ մարմարին, որոյ  
հանք ոչ գտանի ասէ ի շրջակայս Գալրիժու, եւ չիք  
նմանորինակ քար ի քաղաքին:

Յաւելու եւ զայս, թէ Մ. Դ. Թաղիագեանց՝  
զրեալ է ի Կ. Պոլոյ նախակ մի առ Հայր իւր պարոն  
Յակովը Սէթեանց ի Զուզա, (որ է Եղմայր Թանկայ)  
յամին 1839 Ապրիլ ամսոյ թուականաւ, յորում այս  
պէս ասացեալ է.

«Գրում ես թէ Թանկումի գերեզմանի խաթ-  
րու իւր անուամբն մին գիր շինեմ: Ոչ թէ մին գիր

„ոտանաւոր, այլ էսայ տարի ու կէս այ ամէն օր իմ՝  
ուաշխատանքս այ, նորս վերայ ոտանաւորով գրբեր շի-  
ններս: Պատճառ մինչեւ հիմա ձեզ չուղարկելո նո-  
որանց Օրինակն էն այ, որ պիտի ապազրեմ, և այն-  
ովէս ուղարկեմ: Եւս զրես որ իւր համար քար շի-  
ննեմ սիրելի, քեզ ով ասաց թէ թանդումի գերեզ-  
նմանի վերայ քար չկայ ձգած. Եւ հ'այկս քար որբո-  
ոլոր թամփեցյ եկեղեցւոյ գերեզմանանը միանն  
ոչկայ, եւ ոչ վրի գրած ոտանաւորի նմանն: Այս, Այս,  
եւ Այս:

Երեւի ի բանիցո՞ւ թէ „Ոտանաւորով գրբերնա-  
են Եղերերգութիւնն այս, եւ ԹԱՆԳԱՐԱՆՆ եւ  
ԹՈՒԹԱԿ ԹԱՎԱՐԴԻՆԵԱՆՑՆ (զոր տաշը ի լցո ընդ-  
ովին.)

Ս'այ մեզ այժմ ծանուցանել ընթերցանելեաց,  
թէ ի Հաստիս այսմիկ ամփոփեալ եմք զայլ եւ այլ  
ոտանաւոր քերթուածս թաղիադեանի, հաղորդեալք  
առ մեզ ի Պ. ա. Յովհ. Շ. Արդսեանէ եւ ի Մեռ-  
լովք Յ. Ակթեանէ, եւ կամ ժողովեալք ի մէջ. այ-  
լում պատեհի թողեալ որպէս ասացաքս՝ առանձին  
ապազրութեամբ հրատարակել զԹԱՆԳԱՐԱՆՆ ԹԱ-  
ՎԱՐԴԻՆԵԱՆՑ:

ՅՈՎՀ. ՔՀ. ՄԿՐԵԱՆ



ՄԵՄՐՈՎԲԱՅ Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

### Զանազան Բանաստեղծութիւնն

(Յորժամ տակաւին խօսեցեալ էր Մեկորովի ընդ-  
ժուանկայ. գրէ առ Տիկին սմբ Սիրվարդ անուամբ, աղ-  
գական Թանկայ, զհետեւեալ ոտանաւոր բանս ի լե-  
զու ջուղայեցաց, զի ապրեալ ընթերցյի նման ի յայտ-  
նութիւն սիրոյ իւրոյ առ նա.



1.

Երեւի Սիրվարդ իւր բարով ող-  
ջանաս  
Թանզում օրիորդին Գիտանի<sup>1)</sup>  
գնաս

Շատ կարօտ բարեւս տաս և հաս-  
կանաս  
Թէ Ե՞րբ այ իւր կամքն որ իրար  
տեսնենք:

2. Ես քանի օր այ գոր տըկար տեսայ  
Սիրտս գնաց հետը միտքս մոլոր այ,

<sup>1)</sup> Գիտանի՝ պարսկերէն բառ, նշանակէ Այցելութիւն.

Թէ Աստուած կը սիրես, երբ տեսնես ասա՛,  
Որ եթէ հաճենայ իրար հետ խօսինք:  
3. Թէ որ ինքը Թանդ այ, ես էլ չեմ էժան  
Այլոց չհաւատայ բոլորն էլ գիտ ան,  
Ինքն իմն այ՝ ես իւրն, մինչեւ յաւիտեան  
Եթէ որ կամենայ իրար հետ ապրենք:  
4. Ասա՛, ափսո՞ս որ կարդալ չես գիտում  
Սիրածիդ գրածն սրտում չես գրում.  
Քեզ համար պատրաստ է աղնիւ զիտութիւն,  
Եթէ շուտ կամենաս իրար գտանենք:  
5. Հայիֆ<sup>1)</sup> որ ջահիլ<sup>2)</sup> այ, դեռ հասկանում չի  
Միշտ սիրվել ուզում այ, ինքն սիրում չի,  
Բայց և լաւ սիրելոյ կերպն կը սովոր,  
Եթէ որ ցանկանայ իրար հետ ըլնենք:



## Զ Ե Փ Ւ Ւ Փ

Զեփիւռ հեղիկ զովարար  
Մի դու այդքան շուտանար  
Թէ գնաս հպիլ ԹԱՆԿԱՑ  
Եւ նովին անուշանալ

<sup>1)</sup> Հայիֆ՝ բառ. Պլու. ՀՀանակէ Ափսոս. <sup>2)</sup> Ջահիլ՝ ՀՀանակէ ԽԱՎՈՐՃԱ:

Օրիորդին ՍէթԱՅ  
Զինէն այս անուշակ լուր  
Թէ փեսայն քո կաթոգնի  
Զոհէ քեզ զկեանս իւր:  
Եւ դու յորժամ կնդրկեալ  
Վաղիւ անգուստ առ իս գալ  
Ախորժիցիս, բոյր զանոյշ  
Զնորա ի քէն առեալ:  
Անմաշանամ ի մարմին  
Տիրեմ երկնից կամարի  
Եւ յայնժամ քո ի շնորհ  
Արշալուսեմ ողջոյն զօր:  
(Անաւարտ մեացեալ)



## Ն Ե Ն Գ Կ Ա Ն Ա Ն Ց

Նա որ յաշխարհ ամենայն  
Ընդ վայրաբար աստանդէր  
Զհնարից նենգութեան  
Զկանանւոյն ձառագրել:


Կնոջ իրկը գեղազան  
Ի բարելոն պատահէր

Եւ զվայելից փափկութեան  
 Ըղ հրաւէրն ընդունէր:  
 Ի տուն տիկնւոյն խոնարհի  
 Զի՞ վայելուչ զի՞ բարի  
 Ուր յետ բազում վայելից  
 Ի ծոց նորա վարդալից,  
 Գոգէ ի գիրդ սիրայրեաց  
 Զայն առարկայ սիրարծարծ  
 Յորմէ Արայն վրիպեալ  
 Զանձն իւր կորոյս և զաշխարհ:  
 Այլ ովելուկն հրճուանաց  
 Որ ընդ մեղու թոյն խառնեաց.  
 Զի անդ յանկարծ այր նորա  
 Յանդոյ ի տուն իւր դառնայ:  
 Շունն ի կիտին փոշիման  
 Մուտ վարանաց ի վարան.  
 Քանզի գիպուածն նակնկալ  
 Մահ մօտալուտ սպառնայր:  
 Այլ կինն իսկոյն ի կիտին  
 Զիւր մանկ ցուցեալ օտարին  
 Փակէ զնա յարկեղան  
 Խնքն խուճապ ի հոդ տան:  
 Ըսլառաջէ առն իւրում  
 Մաքրէ զմօրուսն ի փոշւոյն  
 «Եւ ասէ, «Տե՛ս այր օտար  
 «Յասօր յանկարծ աստ մուեալ

«Զիս ի նանիր վաստակէր  
 «Ի ցանկութիւն իւր ձգել:  
 «Ես շան այնմիկ շատ ցասեայ  
 «Վանել ի բաց խայտառակ,  
 «Այլ զի ըստ վարուցն անոպայ  
 «Անկ էր լինիլ շնսատակ.  
 «Անդ յարկեղան քում մեծի  
 «Պատրուակեալ պահեցի  
 «Զի գու քեզէն ըզ վրէժ  
 «Լուծցես յառնէդ ի խենէշ»  
 Մինչ ընդ բանիս յաւելոյր  
 Սա զարմանս իւր, նա զարհոյր,  
 «Թէ ինձ ասէ, չաւատաս,  
 Առ բանալին գնա բաց:»  
 Մահ որ քան զայս մօտալուտ  
 Հեւ էր աեսեալ մեր անցորդ,  
 Աւշ վերանայր ի զիլոյն  
 Երբ յօժարէր այրն ի նոյն:  
 Ոիրտ ի ցասոյդ բորբոքեալ  
 Միտք ի կրից ամբոխեալ  
 Բազուկ պարզէ խելայոյլ  
 Շոպել փականս ձեպ ի դուրս:  
 Իրմէ կալաւ ի ձեռին  
 Վաշշ յազեցի ... կրկնեաց կինն.  
 Զի հենդ ամաց ի հետէ  
 Առեալ էր դաշն ի միջի:

Անփոյթ զառնէն, երբ ասաց  
 Ռիծաղերես, թէ տարած,  
 Զգեալ առն զբանալի  
 Պարտութիւն խոստովանի:  
 Ապա ի գեղ ւի գինի  
 Ընդ առն իւրում զինուորի  
 Մինչ ի նորայն քուն անոյշ  
 Բանալ զյաղթող զիւր դրոշ:  
 Դարձ արարեալ յիւր սեղեն  
 Որ գեռ զոփսյր ի յարկեղ,  
 Ռոցէ զնա կաթոգնի  
 Ի փետրալից անկողնի:  
 Եւ ձենձերէ սիրոյ դից  
 Բուրունս անոյշ հաճըից  
 Որ ի հալոց ցանկութեան  
 Ի մի ցուլէր զերկոսեան:  
 Այսպէս զտարտամ զայն գիշեր  
 Առաւոտեալ ողջ ի սէր  
 Եւ յարուցեալ խնդամիտ  
 Յուղին հանէ յարաշետ.  
 Ի վերջին իւր հրաժեշտ  
 Զայս տայր պատուէր ծանրամեստ.  
 Թէ երբ զնենդ կանանոյ  
 Յայդ մեծ գրես մատեան քոյ,  
 Գրեալ և զոր ակնբաց  
 Տեսեր, և դեռ չաւատամուտ

Աղէ՛, արգել կանամբիդ  
 Հնաշխարհիկ սիրուհիդ,  
 Եւ լեր յանձին ապահով  
 Թէ կին պահես խնամով:  
 Երբ կամիցի նենդել նա,  
 Աշեղ դաշխ Հիմնայ,  
 Ուր մնայ քո փոյթն եռանդ  
 Ուր քո զնտան, ուր քո բանդ:



## ՆՅԻ ՍԼԵԿՈՒԹԵԱԼ

Նաւուն չունելով զեկավար ճարտար  
 Ի ծովու ալիս ծփի հողմավար,  
 Ուստի անժաման ի նաւահանգիստ  
 Գիպուածովք ժայռից սուզանի ի վայր:  
 Սզնալէս անիմաստ տանն կառավար  
 Շըշէ անխոհեմ, զհիմն վեր ի վայր:



## Ե Բ Գ

Ուրախ լե՛ր, ցնծա՛ Մայր Ուսումնարան  
Մերկեա՞ յանձնէ քո զթուխ տրտմութեան  
Զի ահա փեսայ քո տէր և պաշտպան  
Գայ գոռել զբեղ յիւրում գթութեան:

Ըսդարձակեա՞ յոյժ, Փրկչ'ս ձեմարան  
Զշուք փառաց քոց յաշխարչ ամենպին  
Առէք Մանկունք իմ, բնար տրտմութեան  
Սրբոյ Հօր տաղել զանուն պատուական:

Որ հայրանայ ձեղ  
Բերել մշտապէս  
Զիագութիւն ձեր  
Փառաց ի հանդէս:

Օ՞ն կեցցէ՛ սա  
Հոգւով նորա  
Որ ի վերայ  
Տեր միշտ գթայ:



Երբ թքաման՝ թանաքաման  
Դարձեալ տեսեր յայս վեհարան  
Զի՞նչ այլ քեզ յոյս յաջողութեան  
Կալնուս աստուստ, Մեսրոպ Դաւթեան:

## ԿԵՆԱՅ ԹԱՍ

Ուրախութիւն բազմեալ եղբարց  
Առցէ զուրախ զեւը կատարած,  
Երբ բաժակաւ աղնիւ գինւոյ  
Խնդրեմք կեանս բարեկամաց:  
Լի՛ց, լի՛ց, լի՛ց,  
Լի՛ց Մատուռակ  
Զուրախարար  
Քոյ զբաժակ  
Յայսմ պարկեշտ խրախանի  
Երջանկութիւն մեր պսակի,  
Երբ բարեգութ Արքայն երկնից  
Յանմեղ աղերս մեր խոնարհի: Լի՛ց, լի՛ց ևն..

Յաւելուլ մեզ երանութիւն  
Բարեկամաց մեր բարութիւն,  
Եւ տան Հայոց Մօր աշխարհի  
Շքեղափառ նորոգութիւն: Լի՛ց, Լի՛ց, և մե.  
Այս ապաքէն Պարոն —  
Լիցի անդին քո Կենաց Թաս,  
Եւ Համօրէն ընտանեաց բոց  
Մեր Հարալատ բարեկամաց:  
Լի՛ց, Լի՛ց, Լի՛ց  
Լի՛ց Մատոռուակ  
Զուրախարաք  
Քոյ զբաժակ:



## Տ Ա Պ Ի Կ

Բ ա ր ե կ ե ն դ ա ն ի

Ա՛՛, նոր օր փարելի նոր բարեկենդան,  
Յաստուածուստ ի վերուստ մեզ տօն ցնծութեան.  
Որ ուրախ ընդ սրտի տաս կեանս մարդկան,  
Ուրախ սիրո՞ ուրախ կեանք՝ քեւ առատանան:


Յոյժ բարեաւ<sup>1)</sup> ծագեցար դու բարեկենդան,  
Կարապետ և պարէտ նորահրաշ գարնան.  
Քեւ երկիր մերկանայ զիւր թուխ<sup>2)</sup> ձմեռան,  
Խսկ սիրտ մեր զմռապյլ հոգոց տիսրութեան:  
Աւալ՝ ապա և օրհնել, ասէ Մարգարէն  
Զարարիչ յաւիտեանց՝ զԱստուած մեր ՈՐ ԷՆ.  
Զի թէ փառք են նմա կեանք ազգի մարդկան  
Եւ կենաց փառք թուխ<sup>3)</sup> աւուրք ցնծութեան:  
Խսկ որդին<sup>4)</sup> Սողոմոն տայ ուրոյն ժամուց  
Զարժանիս իրերաց<sup>5)</sup> ըլպաշտօն և գործ.  
Ի կշիռ իմաստնոյն ինդութիւն և լաց,  
Ճիշդ կալան կանոնօք<sup>6)</sup> զտեղիս իւրեանց:  
Ապաքէն հրճուեսցուք, եղբարք միաբան,  
Արլութեամբ կատարել մեր բարեկենդան  
Եւ Հանցուք Տուողին<sup>7)</sup> բերկրանաց մարդկան  
Զօրհնութիւն ի քնարս անմաշ<sup>8)</sup> գովութեան:  
Այս գոլով և Վեհիս մերոյ Օծութեան  
Շնորհիս Յովհաննու նոր բարեկենդան,  
Խնդրեսցուք յԱստուծոյ պահել անսասան  
Ընդ յոլով հոլովս ամաց ցնծութեան:

<sup>1)</sup> Ի Տպադրեալն՝ Ա՛՛ բարեաւ՝ <sup>2)</sup> Ի Տպար.  
Քօդ: <sup>3)</sup> Ի Տպագր. Ապա կենաց փառք աւուր.ք.: <sup>4)</sup>  
Ի Տպ.՝ Նորին տայ անձն եւր ժամուց: <sup>5)</sup> Ի Տպ. Զարժանին իւրեանց միշտ: <sup>6)</sup> Ի Տպ. Կանոնօք կալան միշտ: <sup>7)</sup> Ի Տպ. մեզ երանութեան: <sup>8)</sup> Ի Տպ. Խնդութեան:

ԺԱՆՈՒՅԻՆ ԽՈՎՈՅԻ ԽՈՎՈՅԻ ԽՈՎՈՅԻ

ՎԵՐԱՊԵՏԵԱԼ ԵՐԿՎԵԻՆ ՏԱՂՔԴ ԿԵՆԱԳ ՇԱԱՍ Եւ  
ԲԱՐԵԿԵՆԴՐԱՅ, ԹԷ Եւ արդէն կային տպագրեալ ի  
ՆՈԽԱԳԱՐԱՅ ԶԲՈՍԱՅԱ անուանեալ ԵՐԳԱՐԱՆԻՆ  
(Տպ. ի Կալկաթա 1846), բայց սրովհետեւ գտանէին  
սոքա առ իս հաղորդեալ ի ձեռագրին, վերստին ետու  
տպագրեւ նշանակեալ զտարբերութիւնն. Եւ զի չկայր  
ի ձեռագրին վերջին տունն Բարեկենդրանի Երգոյն:  
Ի յիշատակեալ ՆՈԽԱԳԱՐԱՆԻՆ գտանին եւ այլ երդը,  
զորոց չեք ծանօթութիւն թէ սյօք իցեն Թաղիա-  
գեանի սրակո զերկացունցդ ՏԱՂԵցդ՝ ի ձեռագրէն  
տեղեկացաք լինել մերս այս Քերթողի:

Յ. Ք. ՄԿՐԵԱՆ



## Ա Թ Ե Պ Ճ

ԱՓՐՈԴԻՑԱՅ ԵՒ ԲԵՂՈՆԻ ՑԻՄԱՐԻ

Ի ԿԸՆԿԸԾԹԱ

Բանաստեղ ծ. Ափրոդիտէ Մուղպայդ մեծ  
Զամուսնութեան օրէնս եղծ  
Աղերսանաց ժամ չկայ,  
գնաց, գնաց, ճար արա՛:  
Պանցա, գու ի փող եղեգնեայ  
Փող հար յունկըն բեղոնայ,  
«Անց քո հեշտն Ափրոդիտեայ՝  
«Ի սէր գեղոյն Մէրկուրեայ»:  
«Զարթիր Վուլկան անդեղեայ  
Յանց կաղմա՛ անդամանդեայ  
Վարմեա՛ զերկուս տարփածուս  
Աղաղակաւ հան ի դուրս:  
«Ել մի՛ թողուր ցուլս հրէց  
Զկին քո տարաւ գողն Հերմէս,  
Ե՛լ, բողոքեա՛ յատեան դից  
թէ անդոսնեաց Ակնուս զիս»:  
Բեղոն Հէփեստացեալ. «Տարա՞ւ Հերմէս, [թող տանի,  
«Կիկուպ ուռն ած ուժգնակի

«Զայս շինեցից և մի շանթ  
 «Ցուցից ապա զիմ եռանդ»:  
**Ավրորիան.**  
 «Լոեաց, գժնեայդ Հեփեստէս  
 «Մրձոս դարբին սկերես  
 «Զի քո բաժին է դարբնոց  
 «Եւ ոչ հեշտալին իմ ծոց»:  
**Հիմեն.**  
 «Աստուած ուրախ հարսանեաց  
 Այլ ոչ կապեմ զակամայս  
 Զի իմ հանդոյց խղանի  
 Երբ սիրու ընդ սիրու ոչ կապի:  
**Անդեւ հաս.**  
 «Ապ' դարձ Հեփեստ տրտահօնծ  
 «Հրափորձ ի քոյ դարբնոց,  
 «Սիրու առ, մի լար հեծելով  
 «Գնաց, այլ զի՞ւչ շահ լալով»:  
**Եղծ.**  
 Յուշ առ միշտ այս է վախճան  
 Անհամեմատ պատկի  
 Կին սիրուն ընդ այր դաժան  
 Այսօրինակ շաղկապի:



## ԿԱՏԱՐԱԺ

Ի նանիր ևն ջանք Արուեստի  
 Եւ զուր նորին բանութիւն.

Տալ աղաւնւոյ տիպ տատրակի  
 Աղաւաղել զբնութիւն.  
 Զի մին կեսլ միշտ ողջ անարատ  
 Իսկ մին սիրէ կալ արատ  
 Մինն է անլոյդ ի մահ զուգին  
 Իսկ մին չունի մահ զուգին:



## ՈՊԵԱԼ

Ի տես հոգեհարազատ սիրելոյն Դէորգայ  
 յաշխարհին Հնդկաց. 1827.

1. Մեծ է ինձ այս օր զուարձալից  
 Աւր ցնծայ հոգի պանդիստիս.  
 Զի ահա սիրելին սրտիս  
 Պայծառ քան զԱրև ցուցաւ իւձ:
2. Ե՛կ սէր իմ, յայս վտարանդի  
 Թափառանս յափն Գանգիսի  
 Անձկայեաց լմ'ր իմում սրտի  
 Հայրենեաց վճիտ <sup>1)</sup> հայելի:
3. Աւառնեալ ժեռք ոսկեզօծ  
 Է՛ջ մտցուք ի պարտէղ ինկոց,

<sup>1)</sup> Ի Տպ. Հայրենեաց սիւգ իմանալի:

- Ուր իքն ուսցին պարը թունոց  
Գեղգեղել ինձ զաշխարհ Հոյոց:  
4. Բամբ ծաղկանց՝ սրտի զուարթարար  
Առ եղերբք առուաց փողփողեալ  
Կարդացեն քարոզ անբարբառ  
Թէ շքել շինի մեր Աշխարհ.  
5. Ո՞՛՛, <sup>1)</sup> անձն իմ զուարթացեալ ցնծայ  
2) Զի երկիր քո՝ ապահով կայ.  
3) Առ հիւսած ծաղկանց եռանդեան  
4) Հոգեփունջ տալ նմա ընծայ.  
6. Բարերար կամաց Արարչին  
Գոհութիւնք ի մէնջ ինկեսցին,  
Որ պահեաց ողջութեամբ անձին  
5) Տեսանել զիմ փափագելին:  
7. Ա՛յ անմեղ՝ իմ խաղուց ընկեր  
Յա՞յս և դու՝ դառն անկար յերկիր  
Ընամեան պանդիսիս լինել  
Հրեշտակ ոմն աւետարեր:  
8. Յիս ապա՝ գա՛րձ իմ Գէորդ դա՛րձ  
6) Զի անյագ զքեւ փարեցայց.  
7) Տուր իմոց պապակեալ շըթանց  
Համբոյր սուրբ հողոյն Հայրենեաց:

<sup>1)</sup> Ի Տպ. Հոգիս. <sup>2)</sup> Ի Տպ. Ար. <sup>3)</sup> Ի Տպ. Առ  
զփունջ ծաղկանց հակեկայ. <sup>4)</sup> Մեծարանս նմին ըն-  
ծայեա. <sup>5)</sup> Ի Տպ. Համբուրել զքեւ Գէորդ իմ: <sup>6)</sup>  
Ի Տպ. Յայտառ քո այդ արեայրեաց. <sup>7)</sup> Ի Տպ. Տալ.

Յետ ըննամեան պանդխառութեան իմոյ յաշխար-  
հին Հնդկայ, յԵպիսկոպոսական Ճեմարանի Անդղեաց-  
ոց յամին Գանդիսի, յանկարծ ի վեր երևեցաւ ինձ  
Պարոն Գէորդ. Այժմաղեան Երեւանիցի, որ լեալ էր հա-  
սակակից եւ խաղընկեր անուշակ դարու մանկութեան  
իմոյ. եւ ետ ինձ առիթ գրելոյ զտողս զայսոսիկ.

Մ. Դ. ԹԱՂԼԻԱԴԻԵԱՆՑ:

Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Խ Թ Ի Խ Ն Ծ

Այս երդ սպագբեալ կայ յԱզգասէր Օրագրի  
Թաղիագեանի իմիւ 7. 27 սեպտ. 1845, երես 55. յոր-  
մէ եղի աստանօր զտարբերութիւնս ձեռագրին.



## ՃՈՑԼ ԱՃԱԿԵՐՏ

Խոժոռագէմդ Աթենաս

- 1) Զի՞ ինձ այսքան խստանաս,  
Ուր ոչ կամբ են, ոչ <sup>2)</sup> և իշէ  
3) Քո պարապիլ իմաստից:  
Կորիցէ քոյ Այլուրեն  
Որ միշտ քաղէ զիմ հոգին.

<sup>1)</sup> Ի Տպ. Լ՛ո. <sup>2)</sup> Ի Տպ. Եւ ոչ <sup>3)</sup> Ի Տպ. պա-  
ռապիլ քո:

Օ՛ շ թէ լեալ էր իմ անրան  
Եղն լծեալ ի գութան:  
Քան տեսանել զանողոք  
Զերես քոյ ինձ ի մորմոք,  
Եւ տրորել ծաղեկ տիս  
Ի գիւտ քզին ցնորից:  
Առ ի՞նչ պիտին քո ուսմունք  
Քոյ ցաւազին սկզբունք,  
Այն ի՞նչ ոսկի և արծաթ  
Զմարդ առնեն միայն մարդ:  
Եւ ե՞րբ իցէ, զի չիցէ  
Յերկրի մերում Այլ և Քէ,  
Զօր ամենայն հեշտանալ  
Ի խայտառակ խաղ ու պար:  
Արշամ որ քան զիս միմար  
Ո՞չ է իշխան մեծափառ,  
Ուսաց ապա ես էրո՞ւմ  
Քոյ զանալիտան գիտութիւն:  
ԺԱՆՈԹՈՒԻՆԻ ԺԱՆԻՆ

Ասս ոսանաւոր եւս տպագրեալ է յԱզգասեր  
լրագրի իւրում, ի թիւ 13. 8 նոյեմ. 1845. երես  
104. բայց միայն չորս տուն: Վերջին երկու տունք  
գտան ի ձեռագրին, վասնորոյ եւ ես յաւելի տա-  
տանօր.

Յ. Ք. ՄԿՐԵԱՆ:

## ԱՆՈՒՅՆԸՆԻ Ի ՍՈՒՍ ԱԲՄԵՆՑԱՅ

(զշեղիմակի Մհեմի Հայ Բառագրոց)



1.

Ր ի սօսիս մենաւոր  
Այսքան տարտամ և տիսուր  
Յածիս Մուզայդ երկնաւոր,  
Հայ ողջունել իմաստուն:

2. Արբ զբաժակն անմրուր  
Զոր յումզ պաշտէ քո Վ. Պ. Յ. Ր.  
Էնդ երախտեաց տրիտուր  
Մեր բազմարդիւն Ծերունոյն:

3. Կեանս աղերսել երկայնօր  
Միշտ անդքաղ միշտ անդոյր,  
Էնդ անմահից համահյլ  
Զիր են օրհնել ինքնաբուն:  
4. Մի՛ տընեսցի մահն ի զուր  
Յայն մեղանչել Ալեոր,

Զոր անմահին արարք իւր  
Քան զշոգի զուարթուն:  
5. Զի թէ՛ւ ի ճրդն անձնատուր՝  
Զայսքան վսեմ ինչ շնորհ  
Ո՞ յանմահից յաւելոյր  
Յիւր իսկական բնութիւն:  
6. Թող արդ սօսիք անձնաւոր  
Աջոյն մատչին ի համբոյր,  
Որ զաղդ արար մի ներկուռ  
Աստգւածախօս բարբառոյն:  
7. Եւ յարձանի ոսկե չոյլ  
Յերախտագէտ սիրտ ի խոր  
Նոր Մկրտեաց զանուն իւր  
Անմահական պերճութիւն:



Դու որ մարմնով միայն մարդ,  
Աեր, ա՛րբ, ուրախ ի կեանս արդ.  
Հոգի չունիս, որ վախես  
Թէ համար տալ կայ քեզ անդ:  
Նենդեա զաշխարհ անխնայ  
Զիարդ կարես փող կուտեա,  
Մի՛ վախեր, զի օգնական  
Է՛ քո աստուած Մամոնայ:



## Մ Ա Պ Թ Ա Ն Ք



Ովկիան շնորհաց սուրբ Հոգի,  
Ծորեա յիս յորդաւատ ուխ բանի,  
Զի պասքեալ անդաստան իմ մտաց  
Բիւրելովիեան բերովք քովք պտղեսցի:  
Զուր կենաց զայն խնդրեմ զոր Յիսուս  
Խոստացաւ, քե տալ ինձ եղկելոյս,  
Անձրեա ամպ թեթև շնորհ յիս,  
Բողըովեալ ի սրտէ փառըս քեզ:



## Տ Ա Պ

Շարադրեալ ի Հնդկաստան յամին 1841

1. Լուր ինձ Թութակ Թաղիադեանց,  
Որ իմ հաղորդ թափառանաց,

Թողեր քո փառըս հայրենեաց,  
Փորձել զաշխարհ այս սուտ և սին:

2. Արդ զեմ ընկալ Խրատ անոյշ,  
Թէ այր շոգմոգ՝ տայցէ քեզ նոյշ  
Մի առնուցուս, Թութա'կ, զգոյշ,  
Զի կեղեւ է դատարկ և սին:
3. Թէ այր մրգուզ տայ քեզ ընկոյզ  
Կամ կին կաւատ բան մարգելոյզ  
Մի միջուկին լինիր ի խոյզ  
Քանզի փեճիկ է սոսկ և սին:
4. Թէ կոյս աղջիկ քեզ երգուցու  
Զիւր սէր, առանց գեղին ոսկոյտ  
Բանից նորա մի անսար դու,  
Քանզի հողմ է դադարկ և սին:
5. Թէ վարդապետ ոք ապիկար  
Խոստանայ քոյ դստեր դաս տալ  
Ասից նորա մի հաւատար,  
Քանզի խորհուրդն է չար և սին:
6. Թէ ամուրի ոք քահանայ՝  
Գլխոյդ նարեկ քաղել ցանկայ,  
Իմացիր որ չար սատանայ  
Քեզ որոդայթ լարէ սին, սին:
7. Յորժամ ասես բոլոր մեղան  
Եւ հարցանէ թէ այլ ի՞նչ կան,

Կմացիր որ քսու է այն,  
Եւ թողութիւն նորա է սին:

---

Ողորմութեան գուռըն փակիր  
Հարստութեանդ յուսացիր.  
Նաւդ ի ծովում, դու յաշխարհում,  
Կայք հանապազ մեծ վտանգում:

---

Ճ Ա Ն Օ Թ Ո Ւ Ժ Ի Շ Ա Կ

Հրատարակեալ էր սոյն ՏԱՊ ի թիւ 931, Ար-  
շալոյս Արարատան լրագրին Զմիւռնից, յորմէ հա-  
նեալ եղի աստ:  
Յ. Ք. ՄԿՐԵԱՆ



### Յ Ա Ւ Ց Ա Կ

ՍՑԱՑԵԱԼ ԱՂԽԻՅՑ ՑԱՆ ԻՄՈՑ

Ի ԾԱՅՐԱԳՈՅՆ ԿԱՅԵՎԵՐՉԵՆ ՄՐԲՈՅ ԱԹՈՒՌԵՍ

Երբ զիս վարժապետ կարգեցին  
Արարատեան Ճեմարանին,

Տուին սենեկիս թախումըն<sup>1)</sup>  
Քոլորն էլ նորաձև իքմին<sup>2)</sup>:  
Վարժապետիս յաջողութեան  
Սիրասուն մանկունիք Թորդոմայ,  
Ասացէ՛ք միաբերան  
Տօռողի տունն չէն կենայ:  
Դռանս վերայ փակ չկէր,  
Զըրջէն<sup>3)</sup> էս իսպառ կոտրած էր.  
Ուժ օրէն յետ կղպակ տուին  
Զըրջէն էլ հօր հոգւոյ թողին:  
Վարժապետիս, և այլն:  
Երեք դաղ<sup>4)</sup> օթախիս կէսըն,  
Ծածկում է փընթի<sup>5)</sup> խսիրըն,  
Խսկ միւս կէսըն դաղ ու կէս  
Մեռելոտի հին կարպետըն:  
Վարժ. և այլն:  
Տասն օրէն յետ<sup>6)</sup> խալի տուին,  
Յիշարաց իշխանին արժան,  
Որ չէ թէ անտաշ էր և հին,  
Այլ և ծուռ մանդաղի նման:  
Վարժ. և այլն:  
Հէնց յերեկ եկաւ իմ օթըն  
Մեծ Աբրահամ վարդապետըն,  
7) Թաշըիֆ բերելով Զուղայէն  
Ազմիածնայ Սուրբ Աթոռըն:  
Վարժ. և այլն:

Սա՝ երբ էս ծուռ խալին տեսաւ  
Խելքը դլսից, թէ կար, կորաւ.  
«Ի՞ն՛ լալման» ասաց, «Վարժապետ  
«Մոնթիդ<sup>8)</sup> խտուր<sup>9)</sup> խաղ առ ըլման»:  
Վարժ. և այլն:  
«Չէ՛, վարդապետ, ասացի ես  
«Փնչ<sup>10)</sup> սապապով ես դու կարծում  
«Որ ես մոնթի խտուր խաղ ամ  
«Երբ դու տեղըս մոնթ չես տեսնում»:  
Վարժ. և այլն:  
«Բա՛ խիստ ծռել խալիչն»  
Զեռքն առաւ որ<sup>11)</sup> դըրստի,  
Երբ չկարաց, դարձեալ ասաց.  
«Ի՞ն՛ լալման, էս ծուռն այ դործած»:  
Վարժ. և այլն:  
Մեր<sup>12)</sup> կառավատ բարձր ոտքով,  
Յոր վեր կ'ենի<sup>13)</sup> նարտը վահով.  
Այլ սորա ես ճարըն տեսայ,  
14) Խառատի<sup>15)</sup> մուննաթ բաշելով:  
Վարժ. և այլն:  
Վրէն դձած էր մին խալի  
Էնքան հին, էնքան աղտեղի,  
Որ քըշիցն բիւր մեռելի  
Տակ ընկած ըզնա կարծեցի:  
Վարժ. և այլն:

Ասուավատիս երկու ծէրն  
Բաց այ թողում էս անտէրն,  
Խոլիչին<sup>16)</sup> գեօրայ ոտներն  
Մեհնելն, ըստեղ սովորեցի:

Վարժ. և այլն:

Երեք<sup>17)</sup> ջուղա<sup>18)</sup> չանդալ դանակ,  
Ամեն մինն մի մին<sup>19)</sup> բարաթ,  
Որ իրենց<sup>20)</sup> օղգա ձեւերով,  
Ըլնում ին իմ տան զարդարանք:

Վարժ. և այլն:

Թէ եօմն Քուրտ,<sup>21)</sup> օխտը եղամին  
Մին բրդած մածնում ժողովին,  
Ամէնն իւր պոչիկ<sup>22)</sup> գգալին,  
Է՛պան զանազան ոչ տեսնին:

Վարժ. և այլն:

Տուին մին<sup>23)</sup> իրուղ մին<sup>24)</sup> լական,  
Մին էր ծակ, մինըն ժանկոտած,  
Էս աղտեղիքս երբ տեսայ ես  
Համարիր թէ<sup>25)</sup> զահէս գնաց:

Վարժ. և այլն:

Անդ առաջին գիշերումըն,  
Երբ սորանք էկան իմ տունըն  
Եօր մեծ Քաղկեդոնին  
Տեսայ իմ երազումըն:

Վարժ. և այլն:

«Որդի, ասեց, մի լուացուիր,  
«Էդ ժանդոստած լականումըն,  
«Դրանք իմն ին և շատ յիստակ,  
«Եղբ ես ի իմ աթոսումըն:

Վարժ. և այլն:

«Բայց էջմիածնայ միաբանքըն  
«Երբ մեռայ ես, անիծեցին  
«Ոչ միայն զիս և զիմ կեանքըն,  
«Այլ և բոլոր իմ կարասին»:

Վարժ. և այլն:

Առաւօտուց երբ զարթնեցի,  
26) Կէկջուն մին գիր գրեցի,  
«Ուստա Աղա, քեզ մին լական  
«Գրաբերովս զրբկեցի.

Վարժ. և այլն:

«Համ անիծած, համ ժանկոտած,  
«Եօրի<sup>27)</sup> գովրէն մին<sup>28)</sup> բունջ ընկած,  
«Յերեկ տուին որ բանացնեմ,  
«Այլ կեղտիցըն զահէս գնաց:

Վարժ. և այլն:

«Թէ կարես ժանկըն կըլէկիր  
«Եւ անէծքի գիրն ընչիր,  
«Մին<sup>29)</sup> ապասի բո կլէկին,  
«Զորս ապասի ժամոց գտիր»:

Վարժ. և այլն:

Ալէկջին երբ տես լականըն  
Եւ լսեց անէծքի բանըն,  
Բարկանալով ինձ զիր գրեց,  
Դուս տվեց յիշաղչի յեսմանըն:  
Աւարժ. և այլն:

«Տօ՛ Ես քու վարժապետի հէլըն  
«Տօ՛ քու կարգողի մեռելըն,  
30) «Թումբէ թումբ անեմ ամեն օր,  
«Է՞ս այ իմ 31) փէշակիս 32) եկըն:  
Աւարժ. և այլն:

«Որ 33) սարահից 34) սըլթա չարած  
«Անէծքըն զըրկէս իմ տունըն,  
«Գի՛ վեր կալ տա՛ր», տղին ասաց,  
«Ես չուզեցի էս դատումըն:  
Աւարժ. և այլն:

«35) Քօրա օլլի, ես տէլտէր եմ  
«Որ անէծքի գիրըն ջնջեմ.  
«Եդ կարալ չեմ, ու թէ մեռնես  
«Ես լականըդ էլ կըլէկել չեմ»:  
Աւարժ. և այլն:

Թող էս գնայ, դեռ բան շամ կայ,  
Ինձ մին 36) էքա 37) գիւկիւմ տուին,  
Որ թ'երեք 38) թայ իլլուն գնայ,  
Ճաք ջուր չի հասցնիլ չային:  
Աւարժ. և այլն:

Տամն և հինգ օրէն յետըն,  
Ինձ նո՞ր ուտելիք դրկեցին.  
Լիտը ու կէս բրինձ տուին,  
39) Զիբիլ էր սորա կէս 40) փայլըն:  
Աւարժ. և այլն:

Մին լիտը բակլայ զբկեցին  
Բակլայ չէր, 41) բալայ էր գլխին,  
Որ ոչ տաք ջրով, ոչ սանով  
Կ'թրջէր, կ'եփէր դարշելին:  
Աւարժ. և այլն:

Երեք օր ծղան փէտ տուին,  
Ներսիցըն բերում էր տղէն,  
Զորորդումըն տուին դնչին  
Առանց ցախ դուռ արին իողձին:  
Աւարժ. և այլն:

Թային արին պիղծ իլլունին,  
Եւ նորա գարշելի հոսին.  
Որ ամեն օր գլխի ցաւից  
Թռաշ լիեզ Մեսրովակիւ հոգին:  
Աւարժ. և այլն:

«Կայլագոյն կառավարչէն  
Խնդրեցի ծղան փէտ տայ ինձ,  
«Կուզես, ասեց, քսան բեռն,  
«Ուղարկեմ մեր ցախանոցից»:  
Աւարժ. և այլն:

Ծնորհակալ եմ, ասացի,  
Թէ միայն չորս բեռն դպկես. —  
Էս օր աչա՛ մին ամիս ոյ  
Որ չորսից մին էլ չը տեսայ:

Ա. Ա. Ա.

Կախուանայ <sup>42)</sup>) կարախախինըն  
Օթախիցըս թամուղ տեսայ.


Աւմ ասում եր, պատասխանեն՝  
«Ըստնց կը բնի, վաճարի բան այ»:

Ա. Ա. Ա.

Էսքանըս ներկոյ գրեցի,  
Որքան մոքովըս զօրեցի,

Թէ էլ բան կայ, որ մոռացայ,  
Ըսէլ, յետոյ այս գիր անցցի:

Ա. Ա. Ա.  
Սիրտասուն մանկութեան  
Ասացէք միաբերան,  
Տուղի տունն շն կենայ:



### Ն Ե Ա Ն Ե Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ի՞նչ իմ բառից զուարձալի ոտանառիս, յանձենացը  
ի մեջ եւ ի պարուն յուսուվայ Յ. Մէթեանց:

- 1) Թօսիսում. (Թագըմ) հանդերձանք, կահ.
- 2) Իրմին. եր, կամ ինչ բառ ոամկական.
- 3) Զըրչէն. բառ պարսկերէն, շրջանակ,
- 4) Օթախ. բառ տաճկերէն, օթեակ, սենեակ.
- 5) Խսիր. (Հասըր) պրատւեայ սփոց.
- 6) Խալի. պարսկ. կապերտ.
- 7) Թօշրիփ. (Թէշրիփ) պարս. շնորհ բերել.
- 8) Մոնթ. աշակերտ
- 9) Խտուր. ընդ, հետ. նախդիր ոտանի.
- 10) Սապապ. (սէպէպ) տճկ. պատճառ.
- 11) Դրսունը. ուղղել ի տիւրիւստ բառէ պարսից:
- 12) Կառավատ. (քէրէվէր) տճկ. մահիճ.
- 13) Սարտըվան. (նէրտիվէն) տճկ. սանդուխ.
- 14) Խառատ. պրսկ. հիւսն, կամ ատաղձագործ.
- 15) Մոննաթ. (միննէթ) պրս. և տճկ. շնորհ ինդրել.
- 16) Գեօրգայ. (կէօրէ) տճկ. համեմատ, ի չափ.
- 17) Ջուղտ. (չիֆդ) տճկ. զցգդ.
- 18) Զանզալ. (չէնչէլ) տճկ. պատառաքաղ.
- 19) Բարաթ. (պապէթ) պրսկ. տեսակ.
- 20) Օզզա. (Էօլիէ) պրսկ. չքնաղ կամ ոյլ և այլ.
- 21) Օխտը. եօթն.
- 22) Գդալ. գրգալ, գգալ.


- 23) հըրուղ. (ելպլըգ) (իպլըգ) տճկ. կուժ. զբաման.
- 24) Լական. (լէյէն) տճկ. կոնք.
- 25) Զահլէ. պրս. ատելութիւն, կամ խառնումն լեղւյ ընդ լերդին յուղմամբ բարկութեան.
- 26) Կլէկջի. (գալայձը) տճկ. անագագործ.
- 27) Դօվը. (դէվը) պրս. տճկ. ժամանակ, դար.
- 28) Բունջ. (քեռշէ) » » անկիւն.
- 29) Ապասի. գրամ պարսից, 5-դ մասն զբանւոյն կամ 30 փարա.
- 30) Թումըէ թումը. տեսակ տեսակ հայհոյութիւնք:
- 31) Փէշակ. պլս. արհեստ.
- 32) Խէր. (խայըր) վախճան, կամ շահ.
- 33) Սարահ. տճկ. առաւօտ.
- 34) Սիլթա. (սիֆթաչ) տճկ. սկիզբն, սկզնաւորութիւն.
- 35) Քօրայ օղիկ. շան որդի.
- 36) Էքուս. ոամի. մեծ յոյժ.
- 37) Գիւզիւմ. (կիւչիմ) տճկ. անօթ պղնձի.
- 38) Թայ. իլլուն. թայ՝ տճկ. մտրուկ ձիշ, և իլլուն՝ տճկ. իւղալից ծառն Մոշայ կամ մոշենի, ուստի նշանակէ տողս, երեք ձիոց բեռն (իլլուն) մոշայ փայտի:
- 39) Զիբիլ. Արար. աւելածուք փոշւոց և աղբից.
- 40) Փայ. տճկ. բաժին.
- 41) Բալայ. (պէլա) փորձանը, տճկ.
- 42) Թամաւզ. (թէմիզ) տճկ. մաքուր:

Յ. Ք. ՄԿՐԵՑՅ

Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Զյառաջիկայդ ԹՈՂԻԹԱԿ ԹԱՂԻԴԵԱՆՑ, տր տպագրեալ էր արդէն յամին 1847 ի Կալկամա, տամբ վերստին ի լոյս, ըստ խնդրոյ մեծ. պարոն Յովին. Շ. Սարգսեանի. քանզի ի վաղոց սպառեալ էին սակաւամթիւ օրինակը առաջին տպագրութեանն, եւ զի՞ լընտրելագոյն քանատենդութեանց անտի մերս Քերթողի համարին պարունակեալքն ի սմա, մանաւանդ ԱԷՐՆ ՎՐԻՊԵԱԼ. զոր ընծայեմք քազմավրէալ սիրահարաց ի խրատ:

ՅՈՎՀ. ՔՀ. ՄԿՐԵՑՅ



ԹՈՒԹԱԿ ԹԱՂԻԴԵԱՆՑ

**ԵՐԻԿԻ ԱԼ**

ԱՐԺԱՎՊԱՏԻՔ ԱԿԵՔ ԱՄՐԿԱՎՔ

Եկեղեցոյ Հայուստանայց

ԳԱՐՈՒ ԳԱՅՐԻԵԼԻ ԵԳԻՑՉՈՐԵԵՆՑ

**Ի ԹԱՆՑՈՒՆ**

**ՀԱՐՍԱՎԲԲԱՋԵ**

Պարոն Ատեփանոսի Որդոյ իւրոյ

բառ

Ծինոր. Հոհիսիմէ Տ. Ա. Վ. Պատմեանց

ԱԶԳԱՅԻՆ ԽԵԳԵՑՈՒԹԵԱՄՔ



**Ի ԿԱՂԱԹԱ**

Ի Տպարանի Արարատեան Ընկերութեան

1847

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ԱԲԱԳ ՍԱՐԿԱՏԱԳԻ

Եկեղեցոյ Հայաստանեայց

ԳՅԵՐԻ Ի ԼԻ Ե ԳԻ Ը Զ Ը Բ Ի Ե Ե Ն

Պատուիի պարոն զըր իմոյ

Աղերս Յաներժամատոյց

Ի բանիլ նորազուարք գալնան ուսում-  
նասիրութեան ի տիս մանկութեան՝ յեր-  
կիղ Տեսոն առ ի Զէնչ մշակեալ՝ քաղեցի  
եւ փնջեցի ի նուէր ծնողական քարեհանու-  
թեան ձերոյ ՄԱՆԻՇԱԿՍ յականց աղբեր  
չեղիկոնի.

Բայց իբրեւ ժամ՝ ի ժամ՝ յառաջ զնա-  
ցեալ գարուն զթութեան ձերոյ փոխադրե-  
ցաւ յաման ամենասատ շնորհաց եւ որդե-  
սէր ինամոց, մինչ սյնքան զի ի հեռաւորս  
առաքեցեր զմրդի քո յամուսնութիւն՝ նման  
ծելունազարդ ծարւոն Աքրանամեան սերնդոյ,  
եւ այն վասն անարատ պահելոյ զարիւն եւ  
զազգութիւն Հայկազունեաց, անդրանկին ա-  
սեմ ազգաց աշխարհի:

Աասնորոյ եւ ես յաւուր ուրախ հարսա-  
նեաց ՀԱՐՍԱՆԽԲԱԺԻՆ ձեզ վայելուչ հա-  
տի զգործ իմ ազգային, որ ունի զբաւա-  
կան յաւթունականութեամբ մշտնչենաւորել  
աշխարհի զերախտիս որդեսէր հայրութեան  
Զերոյ, եւ զպարտիս հայրասէր հպատակու-  
թեան իմոյ յազգէ մինչեւ ազգ:

Անոն յետ Աստուծոյ պատուելի Պատ-  
ճառիդ իմոյ զոյութեան՝ թո՞ղ սովու անմա-  
հասոցի, եւ օլինութիւնք ծնողութեան Զերոյ  
յաւերժաբար ցողեսցին ի վերայ ամենայն ազ-  
գիս, ի վերայ մեծարու եւ սիրելի Եղբարց ի-  
մոց, եւ հուսկ ուրեմն ի վերայ որդոյ քոյ  
եւ Ամուսնոյ նորա յայսմէտէ մինչեւ յա-  
րիտիան\*):

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ Հայր իմ

Ամենախոնարհ որդի քոյ, և ծառայ

Ա. Գ. ԵՎԼԱԶԱՐԵԱՆՑ



\*) Որպէս յայտնի տեսանի՝ գեղեցկահիւս բանք  
ասմակիս, շարադրեալ են ի թաղիադեանէ:

## Ա Զ Գ

Յեւանել իմում ի Հնդկաց յամի Տետան 1830.  
բարձի ընդ իս յաշխարհ Հայրենեաց՝ Պատպիաց մի և  
զթութակ առ ի զրօսանս իմ։ որովհեաւ երկոքին ևս  
բաւականք էին բարբառոյ մարդկան։

Պատպիայն սիրայիմեաց որ երգէր միշտ զԱրայն Գե-  
ղեցիկ և զԽստուածս Հայրենեաց իմոց, մեռաւ և մատ-  
նեցաւ ի խարցիս Գաղաղաց, ըստ որում Համարեցաւ  
թէ Հնդիկ էր յազգէ Բրամանաց։

Սրաց ի միիթարութիւն ինձ միսյն այս Թաւ-  
թակ, որ այն ինչ ձագ տնիկեառը ի ճիրանաց Արծուուց  
մաղագութ ասզրեալ միշտ կրէր զերկիւդ մոհու ի սրր-  
տի ի բուժ, ուստի համարձակ խօսիլ ոչ կարէր։ Զա-  
նացայ ուսուցանել նմա երգս աղջի աղջիս. սայց եթէ  
երգը նորա անախորժ ումեք թուիցին, այն իմ են  
մեղք, ոչ նորա։

Անձն՝ պարսաւագիր Հայերենախօս Թաւթակիս,  
թո՞ղ ի միոս առցէ, զի ագռաւան Պաղոմէսսի ԵԵզիպտոս՝  
ըստ Փիլոնի իմաստասիրի Խըրայեցւոյ՝ ոչ կարէր աւե-  
լի ասել քան թէ՝ „ԱՓՍՈՍ ԱՃԽԱՏԱՆԱՅԱ”։

—Յամի Տետան 1838. Հասեալ ի բաղաքն Կոս-  
տանդիանոսի՝ օժտ արարի ի Ամրուլի Խան, ուր եւ-  
զանակն անձրեւուա, օսարութիւնն խորին, եւ ներքին  
տիրութիւն ոգւոյ իմոյ վհատէին զիս արդեօք, եթէ  
չէր լեալ ընդ իս այս Թաւթակ, գմէէ երազածոյ եր-  
գով այսուի զբաղեցուցանել և ամոքել զմիտա։

—Պանդասն զՄօրէն իմմէ եւ Տուտուն յիւր  
Համանուն՝ ուսաւ կարդալ ի. —բայց զԱկրն Վըիպեալ  
ի վաղուց եւս զիտէր, որք միանդամայն առեալ՝ ան-  
արուեստ եւ շնչին որպէս եւ ենն, տակաւին առաջի  
Հօր Զուարձացելոյ ի Հարսանիս Արդւշ իւրոյ Միրել-  
ւոյ Նուագեալ՝ եւ զրեթէ առաջին Հանդիսացեալ ե-  
ծիսի մերում, յորդւոց առ Հարս այսօրինակ ընծայա-  
բերութեան յաւուրս ուրախութեան որտից իւրեանց՝  
յանբաւս ճիսայ եւ ճիսանայ իմ Թաւթակ, զհետ ու-  
րեմն յարմարելով եւ զաւուրն պատշաճին յուրախա-  
կցութիւն եւ յօր Հնութիւն Կատուածաղյգն Ամուսնոց,  
պատիւ անձին Համարի մնալ միշտ։

Մ. Դ. ԹԱՂԻԳԻԵՎԻՑ



## ԹՌԻԹԱԿ ԹԵՂԻԾԴԵԱՆՑ

Հայկ ի տեսիլ Հայկազնին

ՕՐ ՀՈԼՈՎԻ Շինգերորդ.

Յոր ես պանդուխտ ի Պօլիս,  
Սմբուլ ի վան<sup>1)</sup> անծանօթ,  
Վաստակաբեկ կամ յողիս:  
Գառն ի կոկիծ և մըմունջ,  
Զետ բալասան կացնահար,  
Յրտասառոյց ողջւոյն խռնջ,  
Զեղում յանձնէ վէտ ի վայր:  
Ուր ինձ եթեր մայլուտ  
Քողե զերես քաղաքիս.  
Իրրե զկոյս ևայծ յամօթ՝  
Յաշաց հանե՛ պանդիսիս:  
Պարսիկ անդամ կասկածու,  
Յայդ չելաներ ի կարծիս,  
Աճապարել ի թագուսատ  
Զիւր առարկայ սիրոյ Դից:

<sup>1)</sup> Ամբուլ ի վանս, Զիւմպիւլիւ Խանն է ի Ա.  
Պօլիս.

Զմէ՞ յուսամ անօգուտ,  
Քաղցր ի<sup>1)</sup> գորով գալ առիս,  
Որում գտայ անշաղորդ,  
Թէ ի չարիս՝ թէ բարիս:  
Թէ Մայր կորոյս զիւրի գումար,  
Խրոխտ ի խէթ հայել յիս,  
Ակնուցի՞մ մօրուն խորդ  
Ի գիրդ օտար գգուել զիս:  
Մինչ ի խորհին յայս խորհուրդ  
Ծփա՛մ որպէս լաստ յալիս,  
Ամպք տեղացին տարափ յորդ,  
Զկուրութիւն լալ բաղտիս:  
Պատկերացաւ հէզ մտաց  
ԹԵՆԳ Մեսրովը այ թաղիդանց:  
Որ ի ծնանիլ զմարդ յաշխարհ  
ծնաւ ինքնին առ Աստուած:  
Վեհ զուարթնոց էր տեսիլ,  
Շղարշ զիւրեաւ նրբաթել  
Այլ ի մեղոյշ աշացն՝ ա՛ի,  
Պեռ մարգարիտս անձրեւէր:  
«Զի՞նչ ասեմ, Թա՞նգ, մոռացա՞ն  
Ըղքեղ՝ ազդ քու ւ'ընտանիք,  
Բայց կայ՝ որ լայ ընդ անուան  
Քոյ, և տօնէ զարժանիք:

<sup>1)</sup> Յօրինակի՞ն՝ գումար.

Աինչ գիր Եղքօր, ոյր հեռին  
 Լուր ի բերան մեռար դու,  
 Խնայիցէ գեթ ըստ հարկին,  
 Զանմահ յիշել անուն քոյ:  
 Աինչ սիրասունք երեքին,  
 Ոյց յիշատակ ի բերան,  
 Եւ սէր անմեղ ի սրտին  
 Երժարծէիր յարաժամ,  
 Աինչ քո կուսան սիրելիը,  
 Զորս իրը անգին մատանիք,  
 Գողարիկ կրծոց ունէիր,  
 Ց'վերջին քո շնչել սիք,  
 «Մոռացան, — թող մոռացին,  
 Զի երեսաց բարեկանք՝  
 Ըզ սէր իւրեանց յաչս ունին,  
 Զիք ի սիրասն խանդադանք:  
 Ա յսպիսի քո ընտանիք. —  
 Սակայն փեսայդ ապերջան  
 Ի գալն յաշխարհ աստանդիկ՝  
 Չեռն ի քնար հեծութեան.  
 Աւսոյց անկոց գարնանի,  
 Ըզ բեղ ի խէժ արտասուել.  
 Յաշխան զմահդ աղետալի,  
 Տերևաթափ աշխարել:  
 Հարց ցը շուշան ցայն պայծառ,  
 Որ մենաւոր ի Աստիս,

Զիահ րդ ըղ քայդ տայ տիպար,  
 Յորժամ հնչէ ցուրտ հիւսիս:  
 Խոր ի ներքուստ մացառաց,  
 Զպարկեշտուհւոյդ յիշատակ,  
 Աւսաւ յերեսն ամօթիսած,  
 Ֆինջ նկարել Ասնիշակ:  
 Ամչն է վճիռ մահացուաց.  
 Այլ երանի էր անձին՝  
 Թէ քո նման՝ յոյս յԱստուած  
 Եւ սիրո ի սէր Փրկողին:  
 Յուղ անդարձ հասարակաց,  
 Ընթանայի կամովին,  
 Ընդ քեղ օրհնել միշտ զԱստուած  
 Յերանելեաց խորանին:»  
 Ատուեր սիրոյն ժմացեալ,  
 Զեռամբացի աղդ արար.  
 Որպէս թէ կաց, զի գեռ քոյ  
 Պայման կինաց չէ լցեալ  
 Եւ զէտ ոգի զուարժուն,  
 Հեծեալ ի մեղմ սիւգ օդոյն,  
 Գնաց, գնաց, վերացաւ  
 Յանկարելեաց բարձրութիւն:  
 Ես մնացի մենաւոր,  
 Սոյզ վարանաց վիշ ի խոր.  
 Աւր այլ ինձ յոյս չը մնաց,  
 Բայց թէ Խորհուրդ և Աստիսօ:

Անդ և Գիշեր նախաստեղծ  
 Որ յայնշոյշ ի սանդարս,  
 Յապահոսեան գահ ի գեղձ՝  
 Ծալեր ըդ շունչ ի ծրարս:  
 Հիբոյս ի տանջ աղետից,  
 Գլով եղեալ կարեկից,  
 Ապսպարէ երազոց  
 Զի յելելս անրջոց,  
 Հանցեն ուշոյ ի վարան  
 Զնորանոր տեսարան,  
 Զի գեթ զհոգոց ծանրութիւն:  
 Վտարեսցեն ի ցնդիւն:  
 Մահու արեան քուն հաղորդ  
 Թաս ի թաթին թեւէ մօտ:  
 Ցիւր մեկոնեան ըմպելիս,  
 Թորել թմբիր ի հոգիս:  
 Զի որ ընդ ցուրտ և ընդ տօթ,  
 Հատի զուղին բաղմատանջ  
 Այսօր Մորիկեան ի կացուրդ,  
 Հանդեայց յերադ հիասքանչ:  
 Թափառական դու պանդուխտ,  
 Հէ քո բոլոր կեանք երազ  
 Ե՞րբ եթող քեզ բազմ յողողդ  
 Զօր տեսանել անվեաս,  
 Ասա ինձ յանկարծ Մորիկեանն օթ  
 Լուսոյն վառեալ ի ճաճանչ

Յաջ և յահեակ ցնդեաց մուժ  
 Առ քնէիցըն յօրանջ:  
 Օդոյն բացաւ վերնողորս,  
 Զեղան զարմանք դուրս անդուստ,  
 Բարէ և զի՞նչ երեան,  
 Լուսարփենից հան երամ:  
 Ստուեր Անմահ Սկայի,  
 Որ ստուծոց բարձակից.  
 Ինձ ի տեսիլ երեկի  
 Ըստ ուրուական խմբի դից:  
 Յ'ոյժ Որմզդի գերազօր,  
 Ցեց յաղեղն իւր լայնալիճ,  
 ԶԱԿԱՅ ունէր առաթուր,  
 Որ մերթ երկրի սասանիչ:  
 Զայն յառաջուստ բարողէր՝  
 ՀԱՅԿԱՅ է այս երեղիթ  
 Որ ստափեաց զարին Բէլ,  
 Զաստուածափառն զներբովթ:  
 Անդ ուր Մասիս յամպն ի վեր՝  
 Գլուխ ամբանայ ձիւնահեր,  
 Եւ երփնէ վարս ի նարօտ  
 Ոսկիծղին առաւօտ:  
 Ինձ Տիտանեանս՝ այս ստուեր,  
 Թուիմ հպիլ կալ ընթեր.  
 Ցորժամ ի պասք ծարաւոյ,  
 Պեղէի ինձ գուր ջրոյ:

«Զի՞ գու մանուկ ի վաստակ  
 Ծախես», ասէ «քո հասակ,  
 Գուբ պեղել քեզ վշտագնի,  
 Յայդ անապատ անջրդի:  
 Թողեալ զջուր կենդանի,  
 Որ կետնս տայ աշխարհի,  
 Պեղեց ոք զաղտախտին,  
 Ի զով ինքեան՝ զայդ գետին»:  
 Ցիս գամ ի մէջ երազոյն  
 Ց'Արշին խօսիմ Դիւցազուն  
 և Անմահ Ստուեր բաջարանց,  
 Թէ մարդ իցես՝ թէ աստուած,  
 Ասա՛ ընդէր Տէր երկրիս,  
 Փոյթ չտանի աղետիս,  
 Փառանգութիւն իւր լքեալ,  
 Բա՛ մոռանայ մինչ իսպառ:  
 Զերկիր պյորան արգաւանի,  
 Է՞ր կիզուցու յարև անդ.  
 Զուրցըն ի մեր գաշտորայ,  
 Խընայելով գետորայ:  
 Ուստի զայրուտ Արփւոյն տապ,  
 Պընէ զաշխարհ ի տագնապ,  
 Եւ զարարած համօրէն  
 Սաստիկ կիզու միջօրէն:  
 Ուր տապահարըն մըշակ  
 Կեզու պասքեալ ի պապակ,

Թողու յանդի ըզ գութան,  
 Առ չուր գիմել զովութեան:  
 Եղինք ի հերկ և ի տօժ՛  
 Ցոգի եղեալ ապաստան,  
 Ժամէական քաղցր արօս  
 Ի ծառաւս անդ մոռանան:  
 Թուփ տերեւատ, աստ և անդ  
 Մացառ փշուտ դժնկան,  
 Ցըցին երկրիս ի մարմանդ,  
 Մեղընդ ծառոց բաղմոստեան»:  
 ՀԱՅԻ ի տեսիլ Հայկազնին  
 Դարձուցանէ զարժանին.  
 Ո՞ւր էր Աղին փափկութեան,  
 Զայն թողի ձեզ Հայաստան:  
 Ուր յիշատակն երախտեաց  
 Հաւուն իմոյ ետ Աստուած.  
 Զայն ի նորա երախտիս՝  
 Անուանեցի ձեզ՝ Մասիս:  
 Անդ՝ ուր չքնաղ ծիածան  
 Կշան եդաւ հաշտութեան.  
 Որդւոց Հայկայ ի բաժին  
 Ժառանգութեանց հան երկին:  
 Ուր առաջին էր ոյդին  
 Աւրախարար բաժակին,  
 Զայն թողի ձեզ գուն ի գուճ.  
 Ըզօսարան վայելուչ:

Եւ ուր Ադին փափկութեան  
 Յոր Հայրն եղաւ մարդկութեան.  
 Ուր են վայելքն անբնին  
 Նորա անմեղ վիճակին:  
 Ուր այն սեղան սրբութեան,  
 Զոր նախ յարոյց Հայաստան.  
 Հաշտել զՏէր ի նուեր,  
 Զհերկ և հունձ մեր օրշնել:  
 Անհետ եղեւ մինչ իսպառ,  
 Արմենակոյն սուրբ Անտառ,  
 Ուր ի սօսեան հովանիս,  
 Գիտաց նստեալ աշխարհիս,  
 Ոմն յաստեղունս, ոմն յարե,  
 Ոմն ի ծաղիկ, ոմն տերե,  
 Իսկ սա ի սեռ և տեսակ  
 Զտղայն կրթէր ժամանակ:  
 Ընդ ուր ի վիհ ևորանդունդ,  
 Յումպ մի եկուլ հողագունտ,  
 Քառավտակ գետորայ,  
 Որ զդրախոն Ադինայ  
 Պերճ ի շուշան վառվառուն,  
 Քաղցր ի պտուղ պարարուն,  
 Յօրինէին ի նախանձ,  
 Լուսափաղիւն աստեղաց:  
 Եւ ի պտղոցն անուշակ,  
 Զանցաշարար օշարակ,

Քամեալ յոդի՛ Մահացուին,  
 Աստուած անմաշ՝ առնեին:»  
 Աստ ծովացան արտասուք,  
 Ընդ հին աւուրց Հայոց շուք.  
 Հեկեկալով՝ Գիւցաղին:  
 Զայս արարի դարձ բանին:  
 «Բա՛ մեղ հասին և կորեան  
 Վայելքն աւուրց մշտերան.  
 Որ առ պապիս պապակեալ,  
 Տապաստ գնիմ ոգեսպառ:  
 Այլ զի՞նչ իցեն այսոքիկ,  
 Դառն յաւելան և չարիք.  
 Յորժամ յերեկ դեպ լիներ,  
 Ինձ պատահար անըմբեր:  
 Տեսանեի, Քաջարանց.  
 Յեմակ վեհիս ի լերանց՝  
 Հովիւ՝ որ դիւր ծարաւուտ  
 Վարեր ի վեր կոյսըն հօտ.  
 Աշխարանին նքողեալ,  
 Տոչորք ի տապ ոգեսպառ.  
 Զառապարիդ զկիսով  
 Թօմափեցան քո՛լ ի քո՛լ:  
 Գառանց անմեղ երամակ  
 Գալար սիզոց փոխանակ,  
 Լիզոյր է՛հ իւր ի սնունդ,  
 Զարեւակէղ բարակոյտ:

Ամել ի բերան մատաղ ուշ  
 Զիւր լմէր պառկ մօր,  
 Այլ պարարիչ ընդ կաթին,  
 Զոգի քամէր ծնողին:  
 Հէ՛, ուշ տեսիլ աղետիս,  
 Յուշոյ ողջոյն տարաւ զիս.  
 Եւ զի՞նչ Հովին անդ տրտում՝  
 Յարկածն առնէր անողորմ.  
 Ընդոստ լերին թափ ի ծայր.  
 Դիմէր գնել մարդ դալար.  
 Զադրիական ծովափամբը՝  
 Արօտ տեսեալ լի ծաղկամբք:  
 Աւր և Հացի բաղմոստեան,  
 Յական աղբեր մենական.  
 Անդըր ձեպեաց շուտափոյթ,  
 Զհօտըն վարել ծարաւուտ:  
 Ականակիտ չուրբ աղբեր,  
 Պապակ նոցին զիջանէր,  
 Կեանք ի բնին' որ իիթայր,  
 Ասս անվրդով՝ միսիթար:  
 Ընդ հովանեաւ հացենւոյն,  
 Քաղցրիկ սուլեաց զիւր շուզն  
 «Ա՛յս աւասիկ քեզ ապրուստ,  
 Ա՛յս ինձ պարծանք անկորուստ:  
 Կերայց անոյշ կաթն և սեր,  
 Ագայց և զասր աղմիւ ձեր:»

Այլ ովկ յուսոյն սնուտոյ,  
 Կեանք վճարեաց ընդ կերոյ:  
 Ընդ արօտոյ հօտ նորա  
 Զարիւն ի լափ գայլոց տայ.  
 Քանզի գաղան մարդախոշ,  
 Գայլակորիւն Հոռմոլոս՝  
 Ոչսարենի զիւրեաւ մորթ,  
 Յանկարծ ի հօտ նորա մուտ,  
 «Մի՛ ևս մանուկ յաձախեր»,  
 Կրկնեաց Արին անվեհեր.  
 «Ճեն իլրդ յինէն անծանօթ,  
 Ոչ յիսկ իւրեանց՝ ոչ Խորհուրդ,  
 Զգժնեայդ գիտեմ գաղանաց,  
 Գոլ Հոռվիմայ դերաստուած:  
 Զոր շաղաշուրթ այն Վեստեան  
 Բիջ ծնանէր Մարեխան,  
 Պոռնկութեանց նախամայր,  
 Կրկնապատիկ արար չար:  
 Որ աղարտեաց վԱտրուշան,  
 Կենդանական չերմութեան,  
 Զայն սրբազան վառարան՝  
 Մշտաբորբոք հրդեհեր,  
 Կենագործել զոգիս մեր.  
 Նա և զանձն նուիրական,  
 Ախտից տուեալ շնութեան:

Պատերազմի քան սիրոյ՝  
 Ծնող լինի ւ ըստնտու:  
 Իսկ մարդականձ այս կորիւն,  
 Որ ի գայլոց կաթնասուն,  
 Խորհրդաւոր յայն աճեաց  
 Վայրագասուն ձիւաղաց,  
 Որ ի ժանիս միջատող  
 Յողող արեան եկն ի լուղ:  
 Աա և զաշխարհ կրկնաստեղծ  
 Առ անյագուրդ քաղցուն եղծ:  
 «Այո զդա, Հայոց Հայր,  
 Դիտէ արդեան իմ աշխար.  
 Որում Արչին ալեւոր  
 Զհօտն մատոյց կերակուր:  
 Հողմ դառնաշունչ ապ' յարեաւ,  
 Որ լնդ հիւսիս, որ հարաւ:  
 Զազրաբերան զեռնոց տարմ  
 Զաշխարհ ելից ամենայն,  
 Զի ուր Արդէ, ուր Լութեր,  
 Ուր Գրիգոր, ուր Վոլթեր:  
 Որք իբրև գող ինչ ևլուրդ,  
 Ի քունջ երկրիս ծակամուտ,  
 Ապականեալ հեղձուցին  
 Բոյս դալարի՝ զոր գտին:  
 Զգեօղ, աւան և քաղաք,  
 Եղին ողջոյն աւերակ.

Յոր որպէս և տեսանես,  
 Իրը յանջրդի ասպարէզ՝  
 Հանսապազօր կեանք քաղին  
 Ի պեղելոյ զայս գետին:  
 «Իրաւ մանուկ, չամաշինս,  
 Որ զայս ասես զայն գաղես:  
 Թէ ո՛չ իցէր Արարատ  
 Զակըն սիրոյ զանարատ,  
 Թուլիս հովիւն ալեւոր,  
 Վարէր ըզ հօտն անդանօր:—  
 Ուր ինձ զերեսն արեգակ,  
 Պարզեաց ժպիտն անուշակ.  
 Եւ զյաւիտեանց անծանօթ  
 Լուսեաց ուշոյ զիորհուրդ:  
 «Տե՛ս» ասէ ցիս, «Պատանիւ,  
 Զոտամբ լերանց Արքայիդ,  
 Լիճ ծովանայ ձիւնաթուլը,  
 Որ հալս հանուր ծծէ յումպ:  
 Զականակիս գետորայ  
 Երկրի իմում կասու դա,  
 Թէպէտ ինամբ Անմահից  
 Փոյլթ մեծ տարան զաղիտիս,  
 Մշակ հանել մերթ առ մերթ,  
 Փշուլ զձեան կարծը զփերթ.  
 Արդ իսկ բազումբ են մշակը,  
 Անդուլը ի ջան և վաստակ,

Որք անդադար աշխատին  
 Փերթ հատանել ըզսառին.  
 Սակայն սառին սերտութիւն,  
 Սրտիցն ասեմ զու քինուն,  
 Ահաւ յարփւոյն չնորհաց,  
 Ընդգեմ ճկանց կոյ նոցուն:  
 Գնաւ և դու ընդ նոսա,  
 Վասն Հայրենեաց վաստակեա՞:  
 Օր լիցի քեզ տեսանել,  
 Թմբոյդ շրջել հիմն ի վեր.  
 Յայնժամ կրկին Հայաստան  
 Փոխեալ յԱղին փափկութեան,  
 Երանարան լիցի Ձեզ  
 Ի Պոնդոսէ ցՊանդէս»:  
 Այլ իսկութիւն՝ որպէս Կը,  
 Էանց նոյնպէս և ստուեր:  
 Ցուցանել թէ աշխարհ այս,  
 Էր վաղանցուկ իմն երազ:  
 Ժողովրդեան երանի,  
 Որ ճանաչէ զբարի.  
 Եւ դուն գործէ միաբան,  
 Ըզհետ գնաւ գիտութեան,  
 Զի Գիտութիւն և Աստուած:  
 Են սեպհական ստացուած:

Վ Ե Ր

ԹՈՒԻԹԱԿ ԹԱՂԻԻԵԱՆՑ

ՄԵՑՔԻԿ ԴԱՒ



ԱԲԵՊԱՇՈՎ Մայրիկ դու,  
 Բարձան իբէն բարութիւնը.  
 Քոյ չէր գոնեայ ձագ հառու,  
 Կամ հինգ դրամ, մոմ և  
 խունկ՝

Մատուցանել Աստուծոյ,  
 Ի պատարագ հաշտարար,  
 Որ զսնդիս մատաղ քոյ,  
 Զոհ նուիրել հաճեցար:

Կջմիածին կարօտ էր  
 Քոյ հացակեր Մատաղին,  
 Յորում ետուր ինձ դիել,  
 Զայս դաբ դատարկ այլ ու բէն:  
 Ես ո՞վ, մատաղ լինելն ո՞վ  
 Զի՞ ինձ ընդ սեռ և հոլով,

Որով զկեանս ապերջան,  
 Հողմոյ տուեալ ընդունայն,  
 Զիմ պատեցեր օրերով,  
 Դառն զդորով և նղով,  
 Որ ուր երթամ ապերախտ,  
 Զհետ պնդէ գմնիս բաղտ:  
 Օ՛շ թէ էի այր տգէտ,  
 Կամ խաշնարած ի դաշտի.  
 Քան զոր եղայ վարժապետ,  
 Յայս տրորիլ Դպրոցի:  
 Ուր չեք դադար և ոչ գիւր,  
 Ա՛չ կիրակի, ո՛չ լի օր.  
 Ա՛չ դամարճակ ընկերաց,  
 Խւ ոչ խնջոյք ընտանեաց:  
 Եանց աշա՛ վեց ամիս,  
 Մինչ չտեսի բաղանիս.  
 Հայր Աստուածոց ողորմեա՛,  
 Յախտից մարմնոյս խողացայ:  
 Գիտունք, յինէն ուսարուք,  
 Մի՛ յոյժ մտաց ապաստան՝  
 Կեանըս վարել մեծաշուք,  
 Յաշխարհի աստ փորձութեան:  
 Զի սպառազէն ծնաւ ձեր,  
 Պաշտպանուհին Աթենաս.  
 Կեանք զդիսնոց ցուցանել  
 Թշուառութեամբ ոլորած:

ԹՌԻԹԱԿ ԹԱՂԻԴԵԱՆՑ

Տ Ա Ւ Տ Ա Ւ



ԱՌՏ մեծափառ սրտիս  
 Դժիսոյ,  
 Բնդ իս ի դատ՝ յատեան  
 բնութեան,  
 Տե՛ս ՞ր օրէնք թոյլ  
 տան գեղոյ,  
 Այսքան սաստիկ նա-  
 զել, Տուտու:

Ե՛մ ես արդեօք խաղալիկ քոյ,  
 Որ ի հրապոյր խարէութեան,  
 Մտեալ յամուրս հոգւոյ իմոյ,  
 Կողոպտեցեր ողջ զիս, Տուտու:  
 Սիրտ իմ զերի տարար գեղոյ,  
 Կեանս արարեր ստուեր ունայն,

Արդ փրկանակ սիրտ գերւոյ քոյ,  
 Թէ զիս կամիս, առ քեզ, Տուտու:  
 Ի՛ւ, տես սղալ ասաց լեզու,  
 Զի՞նչ փրկանակ ազատութեան  
 Արժան իցէ տալ այն գերւոյ,  
 Որ քո յստին կայ միշտ, Տուտու:  
 Աւր ինձ գերիլ երանութիւն,  
 Ենտուստ գերի՞ գնել փութամ.—  
 Զի՞նչ այս խորին տգիտութիւն,  
 Յոր ընկղմես դու զիս՝ Տուտու:  
 Վասն պատուոյ աղնիւ Հօր քոյ՝  
 Մի՞ խոշտանգեր զիս ընդունայն,  
 Վիրաց՝ զոր բաց նետ գեղոյ քոյ  
 Զ.քեզ դարման զիր, լաւ Տուտու:  
 Քաց կամ զգուռն սրտի իմոյ,  
 Ցարծաթափայլ ծոցոյդ սեղան,  
 Զի անդ զկեանս արարից զոհ,  
 Սիրոյն և քեզ՝ անդութ Տուտու:



ԹՈՒԻԹԱԿ ԹԱՂԻԴԵԱՆՑ

ԱԷՐ ՎՐԻՊԵԱԼ



ԹԻ ԱՇԽՈՅՑ անմահ իմոյ  
Եռանդեան,

Դու, որ ի Դից՝ տուար ինձ  
ոյժ արութեան,

Անկեհերել՝ հոգիս ի փորձ  
վերելից,

Մինչև ի կայս Անկարելեաց Բարձրութեան:  
Չիալարեա ի թես հրեղէն նժուգաց՝

Ցարշաւասոյր թափանձկութիւն քո մտաց.

Եւ սաւառնեալ ի սար լերին Արայեան,

Պաշտեալ ինկով զաստուածուհիս քերթողաց:

Որպէս զի կայծ անմահ նոցուն շնորհաց՝

Վառեսցէ քո զեռանդ հրեղէն տենչանաց.

ԶԵ՞ փոյթ զայլոց:— Բայց ինձ թէ գու հաւատաս,  
Համարէի ձօն ըդ նոսա վերադաս  
Քան զոր բնութիւն սկոռեաց մարդկան ի  
պարդե՝

Բիւր վտանգից թէւ անկեալ ստորեւ:  
Յատուկ սիրոյ Աստուածութեան Արարած,  
Որոյ նման՝ չիք և ի հոյլ ոք Հուրեաց.  
Եւ հնար ինչ մահանացու Քնարիս,  
Միահաղոյն ճառել նորա ոքանչեիս:

Ճառել չիշնեմ: — Այլ թէ սիրել մեղք իցեն,  
Ոյր ի պաշտօն ծնրի աշխարհ համօրէն.

Ո՞ր այն յիմարք, որ զնա տեսեալ, չամաջին  
Անմտարար ըդ դոյն նորհել տակաւին:

Զի բարունին՝ ինքնակրօն Մատենին,  
Թէ տեսանէր զամենագեղ այս լուսին,

Զսա դնէր դենի իւրոյ նպատակ,  
Քան թէ զգուրիս, որք են սորա աղախնեայք:

Սիրուն էր սա, քան զդրախն Ազինի  
Այլ պաշտիւր միշտ՝ ի տաճարին կոյր Բաղդի:

Ուր թէ և խուռն ընթանային ուխտաւորք,  
Այլ ոչ առանց չարչարանաց և խաչի:

Անարդիցի՞ թէ ունիցի վարդ զիւռշ  
Կարէ՞ վտանկ զսեր զսեր ապաժոյժ: —

Ա՞՛ հաւատար: Զի ոչ մարդիկ, այլ և Դիք,  
Զիւռանս անդամ վճարեցին սիրոյ տոյժ:

Յորոց Ասոն ի Վասանտեանն Ասինայ,  
8

Ի բարձրագոյն նուագս երգոց ամբառնալ,  
Լուսալատար զայն Գաղափար Սիրուհեաց:  
Որ իբրև զակն առաւօտեալ Արևուն,  
Հարեալ ի նոր գեղոյ իւրոյ ի փաղփիւն.  
Կամար կապեաց ընդ համօրէն Հպատատան,  
Ցնդել ի բաց զիսաւարին մթութիւն:  
Երանի՞ թէ ըստ արտաքին գիտակին,  
Զբնաղնայր վեհ գիտութեամբ՝ և հոգին.  
Պտուղ բերել նմա զգործոց բարութիւն,  
Որով հաղորդ լինէր երկնից վիճակին:  
Գլուխ նորա երկնահամբոյր աշտարակ,  
Ուր հսկէր թէր սպառազէն ասպատակ.  
Հիւսովք հերաց նորա զոգիս հայեցկաց,  
Վարմել ի վեր Տիկնոջ երկնից պատարագ:  
Ճակատ նորա իբրև ամուր անմատոյց,  
Ցունին աղեղունք, և աչք մառանք են զինուց,  
Որով զինեալ թէ ելանէ մենամարտ,  
Ո՞ կարէ կալ իմանալին հարուածոց:  
Երթունք նորա, շուշանք անփոփ ի շնորհ,  
Առատապէս ճնշեն ի բայ՝ մեղու ծոր.  
Ո՞վ անուշունց, որ սոլոսկեալ ի մարմին՝  
Զմահացուն բնափոխեն յանմարմին,  
Ստիճն սիրոյն կոկն կոկն համասիիւն,  
Տան ստիդեաց՝ բերթողութեան ըզշնորհ.  
Զոր թէ քանի՞ ախորժ ընկալ պատարագ,  
Ցնդունէր իւր, նորածաղիկ պատանեակ.

Աան ի սարէ Նղիմականն Ուրաղայ.  
 Իսկ Թրաքսիդոն յԱզատ լեռնէն ի Մասեաց.  
 Հաղարամեան աշտ արարին Հաշտինայ:  
 ՈՒՔ զառաջինն յանդգնութիւն Տիտանեանց,  
 Զաստուածամարտ խռովութեան բուրգն ամ-  
 բարձ.  
 'Դ ի փլածոյս նորա թաղեալ միութիւն,  
 Ծնաւ յաշխարհ զանմիութիւն մայր չարեաց:  
 Անդ ի խոհերս հրայրեցին Խտռանայ,  
 Դնէր դժոխ բղջախոհին Աստարտայ.  
 Զոր բորբէր միշտ գօտին հրեղէն ի բարձանց,  
 Ցորդ հոսելով ի նա զկարկուտ կայծականց:  
 Անտի ծնաւ տակառափոր մեղ Բեղոն,  
 Անհոելի ճիւաղն ասեմ, սոսկագոյն  
 Ուր լայն բացեալ զդժոխային զիւր բերան  
 Ծծէր ի ներս ունայնութեան զէս համայն:  
 Այլ այն ինչ գեռ ի կոկորդին կէս կլեալ  
 Համահորդան ումպ աշխարհիս վայր երթայր.  
 Անմահ քաղցուն ձգեալ զճանկն եռադան,  
 Զբուտ աղեաց նորա համբուն աւար առ:  
 Ուստի ցցեալ գալարածոյս թաւ տտան,  
 Իբրև նշան գաղանային բարկութեան.  
 Դափիր եհար. Սանդարամետք սարսեցին.  
 Թնդաց. ւաղիք Պղոտոնի հալեցան:  
 Ուստի իշխանք և պետութիւնք Անդնդոց,  
 Ոյք տիրէն բիւրաշխարհեան կալուածոց.

Իւրաքանչիւր ըստ բարձու իւրում պաշտաման,  
 Ի գլուխ եղեալ զվակասանին շանթահոս,  
 Եւ հեծուցեալ ի կատաղին Արգաստէս,  
 Փոթորկեցան օրհասական ընծու պէս.  
 Հատան ի բաց զետ կայծակունք յերկաթոց,  
 Որք Հեփեստեայ ուռան առին քաջ զփորձ:  
 Եւ մինչ կէս մի փայլատակէր ի նախանձ,  
 Կէս զսյրացեալ փնչէր զօրէն վիշապանց,  
 Եւ ջոկն ողջոյն ըստ ագռաւուց սովելոց՝  
 Կոպյոր զեւրյունին ունայնութեան ջայլ ցաւած,  
 Յութըն յարեաւ վեհ Տիտանեան Վիթխարին.  
 'Նա' որ անուն ունէր սատան Ճշմարտին,  
 Եւ լեռնօրէն դիզեալ զդիտակն այլանդակ՝  
 Ելից զվայր համածաւալ անդնդին:  
 Ապա հանեալ զօձանման իւր լեզուն,  
 Բանս առ ի մշշ աստուածընդդէմ Բանսարկուն,  
 Եւ կարկամեալ ի կոկորդին կապուտակ՝  
 Ժայլթքեաց ի բաց զմոյն սրտին՝ այս գունակ.  
 «Գաղանի ոգիք խաւարային անդնդոց.  
 Արի Տիտանք անտարք ահից Աստուածոց,  
 Որք բռնաւոր ինքնեղութեամբ երազին,  
 Ահ արկանել սյսոց իբրւ տղայոց:  
 Տեսէք, զի՞ Դիք, իբրւ եզինք ի մի լուծ,  
 Ստրկեցին մահկանացուին պարանոց.  
 Եւ զերմեռանդք զերթ մոխրապաշտ Դենմազ-  
 դէս

Զկեանս իւրեանց տան Հաշտինայ ողջակէզ:  
 Մարտան կարդամ ես Դիւցազանց այսպիսեաց,  
 Որք Թժուսոց յայտ արարին զչափ իւրեանց.  
 Թո՛ղ արդ ւ'ինքեանք զչափ այսոց դիտասցեն,  
 Զմեղ իշխան ճանաչելով հեշտութեանց:  
 Բայց զի չարին չիք ընդ բարւոյն միութիւն,  
 Մի՛ Դիւցազանց հաղորդ լիցի Դիւազուն.  
 Եւ մի՛ Գոտեր հեշտասիրին Վինուսայ  
 Հուպ եկեցեն Սան և Ասոն, Թրաքսիդոն:  
 Յայպն որոց, և քաջութեանցն ի նախանձ,  
 Գլորգեցին զգրանդիս յաւիտեանց,  
 Եւ ի վերայ յամրադանդաղ Կրայի՝  
 Մեղկ թուլութեան պղերգութեան գուշակի:  
 Պանկասասան պինդ պարանեալ զբեզոն,  
 Ճիւաղն ի ճնետ փոխարկեցին ճոխագոյն,  
 Եւ յանդիման Հօր Հաշտինայ կացուցին,  
 Իրը աննման նորուն փեսայ՝ ըստ ըղձին:  
 ԲԱՅՑ արդ առ քեզ՝ կարդամ Մուզայդ երկնային.  
 Իմանալի լուսոյն ծնունդ ծոցածին.  
 Որ սիածեալ զանտարափակ անձամբ քով  
 Յանշամանգաղ մասանց օբոյ՝ զմարմին,  
 Պարսյածիս ի լոին թաւս անտառաց,  
 Բորբել սիրով սառուցեալ սիրտքեթողաց.  
 Ոյք ընկերեալ մոռացութեան՝ մոլութեան՝  
 Կան և կասին զօրէն անշարժ արձանաց:  
 Մինչեւ տեսցեն զքեզ զինու յաղթութեան,

Աստուածառաք՝ եկեալ ինքեանց օդնական.  
 Վանել ուռամբ որոտընդուստ շանթի քոյ,  
 Ի մտաց իւրեանց զՔիմեռայս ուրուական:  
 Ի ի քեզ, որ ես հանդիսարան պատկերաց  
 Գերատեսակ գեղոյ համայն գոյութեանց,  
 Նկարելով ուշց նոցա զոր սիրուն՝  
 Առնել գործոց վեհ բնութեան երգեհոն:  
 Եւ զի՞ս — ո՞վ զիս, ուսո՞ Ոգե՞դ Աստուածեան:  
 Զհաշտինայ ողբալ զելլս կորստեան,  
 Զոր ցանկայի զէտ մարգարիտ անստգիւտ,  
 Պահել յաւէտ ի տուփ սրտիս անկորուստ:  
 Ասու, հի՞մ գեղ և թշնամի իւր ինքեան,  
 Յուսահմայ ջալուն անյոյս կորստեան,  
 (Որ տածէ յայլս նախանձ և հեռ, քան թէ Աէր,  
 Յինքեան միայն զկուրութիւն ընտրութեան):  
 Հըապուրեաց զմիստ անբիծ աղաւնացն,  
 Արհամարհել ընդ Դիւցազանց միութիւն.  
 Եւ զանդերձեալ զեղ քան զմին զիւր պսակ,  
 Ծնդ արծաթոյ փոխանակել, զգիտութիւն:  
 Եւ կամ զիա՞րդ<sup>1)</sup> անդատաստան սիրուհին,  
 Ունկն մատոյց գժոխալուր Պատրողին,  
 Ի ընդ անմահից անմահանալ Խոտելով՝  
 Դիսկս ակամայ ած ոսկեբարձ գրաստին:  
 Ձեմ կը կրովն նախաշլսարհիկ ծերունին,

<sup>1)</sup> Յօրինակին՝ անդատաստան:


Ակնապարար ակն Արևու, կամ լուսին,  
 Տե իսկ Արդոս հարիւրաշեան պահ երկնից,  
 Տեսեալ երբէք՝ զարմանս այսքան անքնին:  
 Զի ո՞վ կարծէր թէ առարկայն սիրոյ գից,  
 Բիրտ Բեղնոնի պիտի լինէր կենակից.  
 Կամ ո՞վ թուէր թէ կոյսն այնքան երկնային  
 Փողոյ պիտի ծախէր զաշխոյժ հաստկին:  
 Սակայն արար—կոյր տենչանաց արժանին,  
 Զարհամարհանսըն վառարան իւր խղճին.  
 Աւր մտանէ իւր ի ևարոյկ դագաղաց,  
 Հանապազօր ողջակիղել զհոգին:  
 Ի կարծեցեալ երջանկութեան՝ ապերջան,  
 Նստի թաղեալ՝ համակ իթուս թախծութեան,  
 Թոււ արամի, այլ զէտ այրի մենաւոր,  
 Լայ և ողբայ վասն իւր անդիւտ կորստեան:  
 Զի ընդ առաւօտը յարուցեալ վաղորդեայն,  
 Խնկէ ի վեր զվէտ առ վէտ խէժ զղջման.  
 Այլ զուր նորա անմեղութեան պատրուակ,  
 Երբ Դիք չեն հաճ ընդ գողունին պատարագ:  
 Որ ետ այլում սիրտ զկայան զղջութեան,  
 Զղջալ նորա է աղքակից գողութեան.  
 Որ գողացեալ զբերս անդոյ Օտարին,  
 Պատարագէ որոց օտար է ինքնին:  
 ԱՅՍՊԵՍ աւուրը երանութեան մեկնեցան.  
 Յանդարձ ի դարս յաւիտենից թաղեցան,

Եւ Հաշտինա թէ ակամայ՝ թէ կամայ,  
 Ընդ սեաւ քողով ստորանկեալ Հիմենայ:  
 Ուսաւ ի դառն դպրոցին փորձութեան,  
 Ի միտ առնուլ զյարդ Գիւցազանց, թէ ո՛րբան.  
 Եւ հուսկ ուրեմն մորմոքելով նուագեաց  
 թէ «Տրտմութիւն էր վրիպումն ցանկու-  
 թեանց»:  
 «ԱԽԱՂ, կարդամ հազար անդամ, մինչ յիս դամ,  
 թէ է՛ր ծնողք այսօրինակ ծանրացան.  
 Մինչ զինքնալոյս արեգակամբ քամահել,  
 Եւ զիս Աստղեկ լնդ Բեղնոնի շաղկապել»:  
 Հատանելով ի սուրբ գրկացն անմահից,  
 Զիս մարդարիտ տալ տուաթուր գէր խողիս.  
 Ուկի՞ ունի. ձուլեսցէ թողդ յիւր կոկորդ,  
 Իշացլուն Մեղասայ էր այդ անձկոյթ:  
 Կոյր Հայր, կոյր Մայր,— ա և և գուր բաղտ զաշացու,  
 Զիմրդ զկեանս իմ արարիք ոսկւոյ զոհ.  
 Կարե՞ն արդ ձեր հալանք և հանք պսպղունք.  
 Պատասխանել աշխուժանաց վեհ սիրաց:  
 Ընչարաղ Զօր ադահութեամբ ժողոված  
 Հարստութիւն, լնո՞ւ զտեղին պարծանաց,  
 Կոյր ընտրութիւն. յորժամ գող զայդ գո-  
 լանայ,  
 Յայնժամ իսպառ յոյս բո չուառ սնանայ:  
 Հողս իւր զինոյն—ահա՛ հարուստ է Բեղնոն,  
 Բայց տե՛ս կարէ՛ կառավարել մի՞ ըզնոյն».

Առկիհամետ այս յաւանակ անոպայ,  
 Ար քանի՛ կայ, քանի՛ մնայ՝ իշանայ:  
 Առ գու զհամետն, բարձ զնորա ճոխութիւն,  
 Փոխի վիճակն, ինքն էշ մնայ մի և նոյն.  
 Ըսդ անարդանս և ընդ արդանս չիք միջոց.  
 Ծայլք են նմա՝ գահ արքունի, կամ աղքիւս:  
 Տակառափոր բլուր իմն է մսային,  
 Որում աստուած է որովայն զազրոտին,  
 Զորմէ հոգայ, զորով միայն պատաղի,  
 Աչ գիտելով զինչ ոյըն իցէ և զինչ կին:  
 Աւր պարարէ անասնաբար դայս իւր փոր,  
 Անդ և խորդայ մեռօրինակ ի քուն խոր.  
 Զըզգայ բնաւ թէ ուր, զի՞արդ, կամ ընդ ում,  
 Անցուցանեմ զերկաբութիւն գիշերդյն:  
 Դուք ապաքէն՝ վերացարուք պատկառանք,  
 Որդիապարտք մեկնեցարուք մեծարանք.  
 Եւ գուր ծնո՞ղք, որք կորուսիք ըզգորով,  
 Կորնչեցիք ոսկւով ձերով ի Սեաւ ծով:  
 Քան նաբուգոդ՝ բովաբորբոք բոնաւոր,  
 Քան Փաղաքէ՞ս՝ որ հրակէզն, արար ցուլ,  
 Անագորդյն և չարաչար գտայք յիս,  
 Արկանելով յայս մշտայրեաց բով խզիս:  
 Ձէ՞ օր մի մարդ, ոչ ամիս մի և ոչ ամ,  
 Կարացից բա՞ չարիս տանել յաւիտեան,  
 Հի՞ք այլ հնար աղատութեան եղիւլցոս,  
 Մայսու մնամ տալ աղիտիս ըզ վախճան:

Թէ չէր տեսեալ իմ զարդինին թրաքսիդոն,  
 Կամ վայելեալ զկաթոդին սէր նորուն՝  
 Այսքան ի խոր չազդէր յոգիս ապաշաւ,  
 Ար լցո թոքի, խաւարն առի ընտրանաւ:  
 Ա՛հ, օր սուրբ, ա՛հ: Քանի՞ ի խոր ազգեցեր  
 Դրոշմ հետոցդ երանութեան յոգի մեր.  
 Յորում անհոգ գլուխ ի գոդ հանգուցեալ  
 Ներդաշնակէր ունկան իմում զիւրըն սէր:  
 Քանի՞ սիրուն երալք հաւուցն երգեցկաց,  
 Ծառք և ծազկունք և արձագանգք արձանաց,  
 Զայնակցելով հրեշտակային քնարին,  
 Սողոսկէին ի լուր հիբոյս զմայլանս:  
 Այլ ամք կլցի՞ն յանբաւութիւնս յաւիտեանց.  
 Յեղյեղյեսցի՞ն կարգք համօրէն բնութեանց.  
 Դարձի՞ Զրուան անդրէն ի տիս մանկութեան,  
 Սկսանել զիւր նորաստեղծ Յորելեան:  
 Մինչ զգացի միւսանգամ հաշտինա,  
 Զգայութիւն յանձն իւր այնքան գերակայ.  
 Զի անմարթ է ընկղմելցոս ի մարմին,  
 Ծնչել ըզմիւդ իմանալեաց քնարին»:  
 ԱՅՍՔԱՆ գունակ՝ աչացն ի ցող ոսկեփունջ,  
 Զեղյոր ի լւժ մոռացութեան զիւր մրմունջ,  
 Զի գոյք և գեղ, առանց գործոց բարութեան,  
 Անյիշատակ գնան ի վիշ կորստեան:  
 Լայր, ի յուսոյն և հատանէր հաշտինա,  
 Մինչև յիշեաց դաշն իւր դրուժ՝ սատանայ,

Եւ առաքեաց առ նա յանկարծ պառաւ գոնջ,  
 Օձագիսակ ընդղայն ասեմ դառնաշունչ:  
 Յոյր ի դիմաց հատանէին արհաւիրը,  
 Եւ ի շրթանցըն շողոքորթը և պատիրք.  
 Հրապուրել զերբեմն ընտիր սան երկնից,  
 Խոր ի խոճերս դժոխային աղիտից:—  
 Ո՞վ թէ բարի ինչ վարկուցեալ զիմըն բան  
 Գերալուսին Հրեշտակուհեացն Արամեան,  
 Բերցեն անձանց զայդ ընդ գեղայ արտաքսոյն,  
 Ի զարդ ներքին մարգոց զվեհ գիտութիւն:  
 Եւ ընտրեսցեն յամումնութիւն զայր գիտուն,  
 Որ կարիցէ բարուոք խնամել զիւրեանց տուն,  
 Նա զերաւունս Ամուսնութեան համարել  
 Յետ Աստուծոյ՝ իւր առաջին իւր պաշտօն:  
 Եւ յիշեսցեն ի բարութիւնս իւրեանց մեծ,  
 Զկաթոգին բարեաց իւրեանց՝ բանաստեղծ,  
 Որ աւ ի խրատ, քան ի գանգատ Հաշտինայ,  
 Զվարիպեալն նուագեաց Աէր՝ այսպէս:



ԹՐՈՒԹԱԿ ԹԱՂԻԴԵԱՆՑ

### Հ Տ Մ Է Ն



Եր հարսանիք

Եղին երկինք,

Մեր Հայրենեաց՝

Նաւակատիք:

Ո՞վ սիրասունք. Ո՞վ ուրախ զսդ

Ո՞վ ուրախ, Ուրախ երկուք:

Տարաշխարհիկ

Շրջեալ մանկիկ,

Ի կյոր բաղտէ,

Տանջեալ հերիք,

Ո՞վ սիրասունք:

Արդ երջանիկ,

Հարսինդ ի գիրկ,

Իրը յԱդինի

Հանգիր քաղցրիկ,  
 Ո՞վ սիրասունք:  
 Մի՛ երկնչիք,  
 Ես ձեր հիրիկ  
 Պինդ կապեցի,  
 Խղել հնար չիք,  
 Ո՞վ սիրասունք:  
 Զի ոչ աստիք՝  
 Ո՞չ ստորինք,  
 Ո՞չ անողորմ  
 Նոցա չարիք,  
 Ո՞վ սիրասունք,  
 Լիցին հերիք  
 Թէւ Դժնիք  
 Սիրոյն սրբոյ  
 Եղծուլ կնիք.  
 Ո՞վ սիրասունք:  
 Թողլ մեր հըճուիք՝  
 Զեր երջանիկ  
 Կենաց լիցին,  
 Միշտ արդասիք,  
 Ո՞վ սիրասունք:



ԺԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Որպէս է տեսանել, այս Հիմէնեան երգ՝  
 Եղեալ կայ ի մէջ ԵՂԵՐԵՐԳՈՒԹԵԱՆ ԹԱՆ-  
 ԿԱՅ, այլով վոփոխութեամբք: Մեք որպէս  
 գտաք ի ԹՈՒԹԱԿԻՍ, զնոյն եւ աւանդեցաք,  
 զի յար եւ նման լիցի առաջին տպագրու-  
 թեանն եւ երկրորդս այս, եւ զոր ընծայեմք ի  
 վայելս սիրողաց սիրաբան նուազաց՝ մեծ  
 Քերթողիս Մ. Դ. Թաղիաղեանց, որոյ յի-  
 շատակն լիցի՛ օրհնեալ:

ՅՈՎՃ. ՔՃ. ՄԿՐԵԱՆ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0331636

UkrUp  
1981